



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 08

19 օգոստոսի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ

Ավագանու նստավայր

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Աշոտ Անտինյանը, Գրիգոր Կարապետյանը, Արշակ Սրապյանը, Շուշանիկ Հակոբյանը, Էմմա Գասպարյանը, Պավլիկ Պապինյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը, Սևակ Խաչատրյանը, Նաիրա Հարությունյանը և Սերյոժա Եսայանը:

Նիստից բացակայում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Արայիկ Քոչարյանը, Սերյոժա Սարգսյանը և Արմենուհի Ոսկանյանը:

Նիստին նեկա էին աշխատակազմի պատասխանատուներ:

Նիստն իրավագոր է՝ նիստին ներկա են ավագանու 12 անդամ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 14.10-ին նիստը հայտարարեց բացված: Նա ողջունեց ներկաներին և առաջարկեց իր նախաձեռնությամբ օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 13-րդ հարց և որոշման նախագծ հետևյալ բովանդակությամբ.

13. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2025թ-ի (ամենամյա) ծրագիրը հաստատելու մասին:

գել. Կ. Մելքոնյան

Համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը նշեց նաև, որ 18.08.2025թ-ին ժամը 17:57-ին հարցմամբ իրեն է դիմել «Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ-ի նախագահ Գևորգ Քոթանջյանը: Հարցման բովանդակությունը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Ռ. Մինասյանը: Նա նշեց, որ պ-ն Քոթանջյանը առաջարկել է 19.08.2025թ-ին կայանալիք համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգի 12-րդ հարցը՝ «Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրի տարածքներում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական

ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին» հանել արտահերթ նիստի օրակարգից և այն քննարկել սեպտեմբերին կայանալիք հերթական նիստում: Առաջարկության հիմքում պ-ն Քոթանջյանը նշել է, մեջբերում եմ. «Հաշվի առնելով ՏԻՄ օրենքը և ավագանու կանոնակարգը, ավագանու արտահերթ նիստին քաղաքացին իրավունք չունի գրանցվելու և հարց բարձրացնելու կամ ելույթ ունենալու»:

Ռ. Մինասյանը նշեց, որ համաձայն Փամբակ համայնքի ավագանու կանոնակարգի 10-րդ գլխի 160-րդ կետի՝ արտահերթ նիստն անցկացվում է հերթական նիստերի համար ավագանու Կանոնակարգով սահմանված կարգով: Բացի դա օրենսդրությամբ տարանջատված չէ, թե ինչ հարցեր պետք է քննարկվեն հերթական, ինչ հարցեր՝ արտահերթ նիստերի ժամանակ /չկան սահմանված սահմանափակումներ/:

Քվեարկությամբ, կողմ՝ 12 ձայների համաձայնությամբ որոշման նախագիծն ընդգրկվեց օրակարգում, իսկ պ-ն Քոթանջյանի առաջարկը՝ օրակարգի 12-րդ հարցը օրակարգից հանելու և հերթական նիստում քննարկելու վերաբերյալ չընդունվեց:

Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծերով: Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 080-Ա/:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի օգոստոսի 19-ի թիվ 08 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
զեկ. Ս. Կոստանդյան
2. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
զեկ. Կ. Շերմազանյան
3. «Սոցիալական Ձեռներեցների դպրոց» ՍՊԸ-ի կրթական ծրագրին ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին:
զեկ. Հ. Մացակյան
4. Փամբակ համայնքի ավագանու 24.06.2025թ-ի թիվ 065-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
զեկ. Ռ. Մինասյան
5. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի ու մրցույթի պայմանները հաստատելու մասին:
զեկ. Ա. Օհանյան
6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Մաթևոս Ռոբերտի Բարսեղյանին օտարելու մասին:
զեկ. Ա. Օհանյան

7. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Վլադիկ Հայկի Քոչինյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

8. Անասնաշենքի կառուցման նպատակով սեփականության իրավունքով Արմեն Կառլենի Մկրտչյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

9. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

10. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

11. «110/35/10կվ «Ստեփանավան» և «Տաշիր» ենթակայանների 2-րդ սնուցումների ապահովումը նոր կառուցվող 110կվ «Ստեփանավան-2» օդային գծով» նախագիծը շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման աշխատանքներին նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

12. Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրի տարածքներում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

13. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2025թ-ի (ամենամյա) ծրագիրը հաստատելու մասին:

զեկ. Կ. Մելքոնյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է ծախսերի գծով. 01.01.01՝ «Կառավարման ապարատ» նախահաշվի, 5112 /շենքերի և շինությունների կառուցում/ հոդվածում ավելացնել 1.000.000 ՀՀ դրամ՝ Քարաբերդ բնակավայրի վարչական շենքի ցանկապատի կառուցման համար:

01.06.01՝ «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» նախահաշվի, 5129 /այլ մեքենաներ և սարքավորումներ/ հոդվածում ավելացնել 945.000 ՀՀ դրամ, 3 հատ ազդարարման համակարգի՝ չչակի, ձեռք բերման համար:

04.05.01՝ «Ճանապարհային տրանսպորտ» նախահաշվի, 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ հոդվածում ավելացնել 10.528.000 ՀՀ դրամ, սուբվենցիոն ծրագրերով իրականացվող ճանապարհների նորոգման համար: Նույն նախահաշվի 5121՝ տրանսպորտային սարքավորումներ հոդվածից պակասեցնել 2.700.000 ՀՀ դրամ:

09.01.01՝ «Նախադպրոցական կրթություն» նախահաշվի, 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ հոդվածում ավելացնել 358.400 ՀՀ դրամ՝ Ազնվածոր բնակավայրում

մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրի իրականացման համար: Նույն նախահաշվի 5112 /շենքերի և շինությունների կառուցում/ հոդվածից պակասեցնել 10.131.400 ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 081-Ն/:

2. ԼՍԵՑԻՆ - «Սոցիալական Ձեռներեցների դպրոց» ՍՊԸ-ի կրթական ծրագրին ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման և զարգացման ծրագրերի բաժնի պետ Հասմիկ Մացակյանը:

Ձեկուցողը ներկայացրեց, որ «Դարձի՛ր Սոցիալական Ձեռներեց, շենագրո՛ւ Քո Փամբակ համայնքը», Սոցիալական ձեռնարկատիրության դերը ՀՀ մարզերի զարգացման գործում գործարարության խթանման նոր բիզնես մոդել» կրթական ծրագրի շրջանակներում ս/թ հունիսի 16-ից մինչև հունիսի 19-ը ներառյալ դեմ առ դեմ հանդիպումներ են իրականացվել Փամբակ համայնքի բոլոր բնակավայրերի բնակիչների հետ, իսկ հունիսի 23-ին և 29-ին՝ առցանց «ZOOM» հարթակով: Հանդիպումների ընթացքում կրթական ծրագրին գրանցվել և մասնակցել են Փամբակ համայնքի 15 բնակավայրերի 174 բնակիչներ, բնակավայրերի ղեկավարներ, բնակավայրերի վարչական աշխատակիցներ:

Ս/թ օգոստոսի 3-ից մինչև օգոստոսի 10-ը ներառյալ իրականացվել է Ընդունելության 1-ին փուլը՝ հարցազրույցների շարք կրթական ծրագրին գրանցված բնակիչների շրջանում, որին մասնակցել են մոտ 173 բնակիչներ, որից 2-րդ փուլ անցել են 88 բնակիչներ (վերջինս ենթադրում է դեմ առ դեմ անձի որակները և գործարար ոլորտի պրակտիկ գիտելիքները գնահատող «հարցաթերթ-թեստ»-ի լրացում): Կրթական բուն ծրագրի կազմում ընտրվելու են ընդունելության երկու փուլերը հաղթահարած և բարձր միավորներ հավաքած մինչև 18 հիմնական ունկնդիր/մասնակից:

Ծրագրին Փամբակ համայնքը նախատեսում է միանալ Սպիտակ համայնքի հետ համատեղ՝ հաշվի առնելով, որ վերջինս արդեն երկրորդ անգամն է մասնակցում Ծրագրին և արդեն ունի հաջողած փորձ:

Հաշվի առնելով վերոգրյալը զեկուցողը առաջարկեց տալ համաձայնություն Փամբակ համայնքում «Դարձի՛ր Սոցիալական Ձեռներեց, շենագրո՛ւ Քո Փամբակ համայնքը» կրթական ծրագրի մեկնարկին, ինչպես նաև տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ կրթական ծրագրին իրականացնելու համար համայնքի բյուջեից 7 000 000 /յոթ միլիոն/ ՀՀ դրամի չափով համաֆինանսավորում կատարելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 082-Ա/:

3. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի ավագանու 24.06.2025թ-ի թիվ 065-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնքի ավագանու 24.06.2025թ-ի թիվ 065-Ա որոշումը կայացնելու ժամանակ, որի համար հիմք են հանդիսացել «Մար-Մոս» ՍՊԸ-ի կողմից տրված «Շարժական գույքերի գնահատման հաշվետվությունները», թվով 3 փոխադրամիջոցները դեռևս հաշվառված են եղել նախկին համայնքների՝ Բազումի, Արջուտի և Մարգահովիտի գյուղապետարանների անվամբ: Փոխադրամիջոցների օտարման նպատակով կատարվել է սեփականատիրոջ անվանափոխություն, փոխադրամիջոցները հաշվառվել են Փամբակի համայնքապետարանի անվամբ, որի արդյունքում փոփոխվել են տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերը և պետ համարանիշները: Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում եմ տալ համաձայնություն ներքոնշյալ փոփոխություններին:

1) Որոշման 1-ին մասի 1) կետում «160 LL 70» պետհամարանիշը փոխել «645 DA 61» պետհամարանիշով:

2) Որոշման 1-ին մասի 3) կետում «999 RR 98» պետհամարանիշը փոխել «941 CS 61» պետհամարանիշով:

3) Որոշման 1-ին մասի 6) կետում Jeep Cherokee մակնիշի բառից հետո ավելացնել «942 CS 61» պետհամարանիշ» բառակապակցությունը, իսկ «N 07 AA005104 սեփականության վկայական» բառակապակցությունը փոխարինել «AH381491 տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր» բառակապակցությամբ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 083-Ա/:

4. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի ու մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց, տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 10 լոտ հողամասերը վարձակալության և 1 լոտ հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելուն:

Հարց հնչեցրեց ավագանու անդամ Արշակ Սրայանը.

- Արջուտ գյուղում երկրորդ կարգի հողամասեր չկան, լեռների վրա են, հազիվ 4-րդ կարգ լինեն:

Պատասխանեց Ա. Օհանյանը.

- Հողատեսքերի կարգերը սահմանված է դեռևս 1997թ-ից, դրանից հետո չի վերանայվել, հողագնահատման խմբերը մեր կողմից փոփոխման ենթակա չեն, դա

կառավարության կողմից հաստատված խմբեր են, որի մեջ փոփոխությունը պետք է իրականացնի կառավարությունը: Ուղղման համար դաշտային աշխատանքներ են իրականացվում, որը պատվիրակվում է համապատասխան լիզենզիա ունեցող կազմակերպությանը: Հողերի գնահատությունը ըստ օրենքի կառավարության գործառույթների մեջ է մտնում:

Առաջարկվեց ավագանուն առաջարկությամբ հանդես գալ, որը կներկայացվի ՀՀ կառավարություն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 3, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 084-Ա/:

5. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Մաթևոս Ռոբերտի Բարսեղյանին օտարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց, հաշվի առնելով Մաթևոս Ռոբերտի Բարսեղյանի դիմումը, տալ համաձայնություն նրան սեփականության իրավունքով պատկանող 06-034-0120-0031 կադաստրային ծածկագրով 1,021743 հա հողամասին կից գտնվող 06-034-0120-0028 կադաստրային ծածկագրով 0,493938 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով Մաթևոս Ռոբերտի Բարսեղյանին օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 700 900 (յոթ հարյուր հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 085-Ա/:

6. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Վլադիկ Հայկի Քոչինյանին օտարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց, հաշվի առնելով Վլադիկ Հայկի Քոչինյանի դիմումը, տալ համաձայնություն նրան սեփականության իրավունքով պատկանող 06-070-0336-0055 կադաստրային ծածկագրով 0,723057 հա հողամասին կից գտնվող 06-070-0336-0057

կադաստրային ծածկագրով 0,32557 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքը ընդլայնման նպատակով, ուղղակի

վաճառքով Վլադիկ Հայկի Քոչինյանին օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 56 161 (հիսունվեց հազար հարյուր վաթսունմեկ) ՀՀ դրամ: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 086-Ա/:

7. ԼՍԵՑԻՆ - Անասնաշենքի կառուցման նպատակով սեփականության իրավունքով Արմեն Կառլենի Մկրտչյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը: Զեկուցողը առաջարկեց, հաշվի առնելով Արմեն Կառլենի Մկրտչյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու մասին, տալ համաձայնություն նրան սեփականության իրավունքով պատկանող 06-023-0250-0028 ծածկագրով 0,1499 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահողը՝ անասնաշենք կառուցելու նպատակով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության փոխադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 087-Ա/:

8. ԼՍԵՑԻՆ - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց, հաշվի առնելով Արտյոմ Ռուդիկի Սաքանյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին, տալ համաձայնություն նրան սեփականության իրավունքով պատկանող 06-010-6001-0007 կադաստրային ծածկագրով 0.09004 հա և 06-010-6001-0006 կադաստրային ծածկագրով 0.06387 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության խոտհարքները, խեցգետնաբուծարան հիմնելու նպատակով, ջրային օբյեկտների հողերի նպատակային նշանակության, ջրային օբյեկտների հողերի գործառնական նշանակության փոխադրելուն: Ինչպես նաև նրան պատկանող 06-010-0001-0017 կադաստրային ծածկագրով 0,1074 հա բնակավայրերի հողերի նպատակային

նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ջերմոց, ծածկարան և պարիսպ կառուցելու նպատակով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության փոխադրելուն: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 088-Ա/:

9. ԼՍԵՑԻՆ - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց, հաշվի առնելով Արսեն Թեմուրբեկի Մկրտչյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու մասին, տալ համաձայնություն նրան սեփականության իրավունքով պատկանող 06-010-0001-0018 կադաստրային ծածկագրով 0,1096 հա բնակավայրերի հողերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ջերմոց և պարիսպ կառուցելու նպատակով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության փոխադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 089-Ա/:

10. ԼՍԵՑԻՆ - «110/35/10կվ «Ստեփանավան» և «Տաշիր» ենթակայանների 2-րդ սնուցումների ապահովումը նոր կառուցվող 110կվ «Ստեփանավան-2» օդային գծով» նախագիծը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման աշխատանքներին նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը առաջարկեց, հաշվի առնելով «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ի 29.05.2025թ-ի ՎՆ-090 գրությունը, ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 11.07.2025թ-ին անցկացված հանրային լսումների արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը և տեսաձայնագրությունը, տալ նախնական համաձայնություն «ՀԷՑ» ՓԲԸ Ներդրումային ծրագրի շրջանակներում «110/35/10Կվ «Ստեփանավան» և «Տաշիր» ենթակայանների 2-րդ սնուցումների ապահովումը նոր կառուցվող 110Կվ «Ստեփանավան-2» օդային գծով» նախագիծը շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման

աշխատանքներին: Փամբակ համայնքի տարածքով վերոգրյալ օդային գիծը անցնելու է Բազում բնակավայրի վարչական տարածքով՝ 11 կմ (որից 4,7կմ անցնելու է գոյություն ունեցող հենարաններով, իսկ 6,3կմ-ն անցնելու է նոր տեղադրվող հենարաններով):

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 090-Ա/:

11. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրի տարածքներում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակ համայնքի ղեկավար Ս. Կոստանյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով «Զով-Գուժ» ՍՊԸ-ի 09.07.2025թ-ի գրությունը, ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 13.08.2025թ-ին անցկացված հանրային լուսնների արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը և տեսաձայնագրությունը՝ տալ նախնական համաձայնություն /կամ անհամաձայնություն/ «Զով-Գուժ» ՍՊԸ-ի կողմից Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրի տարածքում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ նախատեսվող գործունեության իրականացմանը:

Ելույթի խոսք խնդրեց Փամբակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, ավագանու անդամ Սամվել Անանյանը: Նա նշեց, որ մի խումբ ավագանու անդամներով ներկա են եղել հանրային լսմանը, ժողովուրդը հիմնականում կողմ է արտահայտվել: Նա նշեց, որ մի քանի բնակիչ ասել են գործողները թող գործեն, բայց ընդլայնում և նորի թույլտվություն չտանք, սակայն մեծամասնությունը կողմ է արտահայտվել:

Ելույթ ունեցավ նաև Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը: Նա նշեց, որ ըստ հողային օրենսգրքի երկրաբանական հետազոտությունները հնարավոր է կատարել բոլոր հողերի վրա, անկախ դրա սեփականության ձևից, հողատեսքից և այլն:

Ուսումնասիրությունն իրենից ներկայացնում է որոշակի հորատանցքեր, դա դեռ շահագործում չէ, դա պեղումներ է, որը զգալի վնաս չբռնակա միջավայրին չի կարող հասցնել: Բացի դա ռիսկերը գնահատվելու են համապատասխան բնապահպանական փորձաքննությունով, երբ որ կլինի համապատասխան նախագիծ և կհամոզվենք, որ բնապահպանական ռիսկերը բարձր են, նորմերը չեն պահպանվում՝ հաջորդիվ կայանալիք լուսններին կարող եք դեմ կքվեարկել և թույլ չտալ գործունեության իրականացմանը: Նա հավելեց, որ նախնական համաձայնությունը տրվում է, որպեսզի կարողանան ուսումնասիրել և պարզել, կա՞ն օգտակար հանածոներ, թե՞ ոչ: Մենք չենք էլ պատկերացնում թե ինչ կա մեր ընդերքում, մինչև չլինի ուսումնասիրության արդյունքները:

Համայնքի ղեկավարը եզրափակեց, որ լսել են ժողովրդին և բոլորին, եթե հարցեր չկան առաջարկեց քվեարկել նախագիծը: Քվեարկության դրվեց գործողությանը համաձայնություն տալու հարցը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 6, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 3, որոշումը չընդունվեց (համաձայն ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետի՝ համայնքի ավագանու որոշումներն ընդունվում են ավագանու՝ նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ):

Հարց հնչեցրեց «Քաղաքացու ծայն» CV media-ի լրագրող Լուսինե Սարգսյանը.

- Ավագանին և նաև համայնքը ընդունել է ներդրումային ծրագրեր, որոնք ուղղված են տուրիզմի զարգացմանը: Հիմա հարցս ավագանուն եմ ուղղում, ինձ համար առնվազն տարօրինակ է, որ այն ավագանին, որն ընդունել է ներդրումային ծրագրերին կողմ որոշումներ, հիմա հանքարդյունաբերությանն է հավանություն տալիս: Խնդրում եմ մեկնաբանեք: Նա նաև նշեց, որ իր կարծիքով լուծմները կարելի է լեգիտիմ չհամարել, քանի որ լուծմների 55-րդ րոպեին այն դադարեցվեց:

Պատասխանեց համայնքի ղեկավարը.

- Նախ նշեմ, որ լուծմները կայացել են բարձր մակարդակով, բոլորին լսել ենք, ավագանու անդամներից նույնպես ներկա են գտնվել, արձանագրության մեջ մանրամասն նշվել են բարձրացված բոլոր տեսակետները: Նաև նշեմ, որ ճիշտ է մենք ունենք նաև բնապահպանական գոտիներ, մեր խոշորացված համայնքը բաղկացած է 15 գյուղական բնակավայրերից, կա՛ն բնակավայրեր, որոնք զբաղվում են անասնապահությամբ, կա՛ն բնակավայրեր, որոնք զարգացնում են մեղվապահությունը, կա՛ն բնակավայրեր, որտեղ գործում է հանքարդյունաբերություն, կա՛ն բնակավայրեր, որ ունեն ջրային մեծ ռեսուրսներ և զբաղվում են ձկնաբուծությամբ, այնպես որ մեր համայնքը բազմազբաղ է և զարմանալու ոչինչ չկա:

12. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2025թ-ի (ամենամյա) ծրագիրը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Կարեն Մելքոնյանը:

Զեկուցողը առաջարկեց հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2025 թվականի (ամենամյա) ծրագիրը: Այն նպատակաուղղված է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի (այսուհետ՝ Հողեր) օգտագործման արդյունավետության բարձրացման և համայնքի հողային պաշարների կառավարման՝ տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում համայնքային միասնական քաղաքականության սահմանման, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և համայնքի 2022-2026թթ. հնգամյա զարգացման ծրագրով (այսուհետ՝ ՀՀԶԾ) սահմանված խնդիրների լուծմանը և հանդիսանում է ՀՀԶԾ-ի բաղկացուցիչ մասը:

Ծրագրի իրականացման հիմքում դրվել են 2025 թվականի ընթացքում Հողերի նպատակային և ծրագրային կառավարման հետ կապված հարաբերությունները, ներառյալ՝ գույքագրման, հաշվառման, գնահատման, համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքների կազմակերպման, հողերի պահպանվածության ապահովման ու

կառավարման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և բյուջետային քաղաքականության ուղղություններով սահմանված խնդիրները:

Ծրագրի իրականացման իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության հողային, քաղաքացիական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերը, «Տեղական ինքնակառավարման մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին», «Հրապարակային սակարկությունների մասին», «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքները, հողային հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները, ինչպես նաև համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից ընդունված Հողերի կառավարման ոլորտի վերաբերյալ իրավական ակտերը: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 091-Ա/:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ

ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈՒՄ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 080-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2025թ-ի ՕԳՈՍՏՈՍԻ 19-ի թիվ 08 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի դրույթներով, Փամբակ համայնքի ավագանին՝
որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի
ավագանու 2025թ-ի օգոստոսի 19-ի թիվ 08 արտահերթ նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

- Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի օգոստոսի 19-ի թիվ 08 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
- ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
- «Սոցիալական Ձեռներեցների դպրոց» ՍՊԸ-ի կրթական ծրագրին ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին:
- Փամբակ համայնքի ավագանու 24.06.2025թ-ի թիվ 065-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
- Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի ու մրցույթի պայմանները հաստատելու մասին:
- Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Մաթևոս Ռոբերտի Բարսեղյանին օտարելու մասին:
- Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Վլադիկ Հայկի Քոչինյանին օտարելու մասին:
- Անասնաշենքի կառուցման նպատակով սեփականության իրավունքով Արմեն Կառլենի Մկրտչյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
- Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
- Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
- «110/35/10կվ «Ստեփանավան» և «Տաշիր» ենթակայանների 2-րդ սնուցումների ապահովումը նոր կառուցվող 110կվ «Ստեփանավան-2» օղային գծով» նախագիծը շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման աշխատանքներին նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին:

12. Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրի տարածքներում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին:
13. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2025թ-ի (ամենամյա) ծրագիրը հաստատելու մասին:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 081-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
25-Ի ԹԻՎ 157-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 157-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

- 1) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի եկամուտների մասում կատարել փոփոխություն՝ համաձայն հատված 1-ի:
- 2) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերում՝ ըստ գործառնական դասակարգման, կատարել փոփոխություն՝ համաձայն հատված 2-ի:
- 3) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերում՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, կատարել փոփոխություն համաձայն հատված 3-ի:
- 4) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդում կամ դեֆիցիտում /պակասուրդում/ կատարել փոփոխություն համաձայն հատված 4-ի:
- 5) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղություններում կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներում կատարել փոփոխություն համաձայն հատված 5-ի:
- 6) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, կատարել փոփոխություն համաձայն հատված 6-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄԿԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՀԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿ



ՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀՀ Լ Ո Ռ ՈՒ Մ Ա Ր Ձ Ի

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ

2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Հաստատված է Փամբակ համայնքի

(քաղաքային, գյուղական համայնքի անվանումը)

ավագանու 2025 թվականի օգոստոսի 19 -ի N 081-Ն որոշմամբ
(ամիս, ամսաթիվ)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

(Անուն, ազգանուն, հայրանուն)

Հատված 1
Համայնքի բյուջեի եկամուտները

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (u.5+u.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող		832574,72	776631,617	196768,671
1100	այդ թվում՝ 1.ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող	7100	117680,80	117680,8	X
1110	այդ թվում՝ 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող	7131	42651,40	42651,4	X
1111	այդ թվում՝ Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների		200,00	200,0	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		1500,00	1500,0	X
1113	Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ		40951,40	40951,4	X
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136	67389,80	67389,8	X
1121	այդ թվում՝ Գույքահարկ փոխադրամիջոցների համար		67389,8	67389,8	X
1130	1.3 Տեղական տուրքեր (տող 11301 + տող 11302 + տող	7145	7639,6	7639,6	X
11301	Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար		2982,6	2982,6	X
11302	Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման,		0,00		X
11303	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողմնակայանների, խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար		0,0	0,0	X
11304	Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար		1400,0	1400,0	X
11305	Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար		30,0	30,0	X
11306	Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ որոշակի վայրում		0,00		X
11307	Համայնքի վարչական տարածքում ոգելից և այլոռիային խմիչքների և (կամ) ծխախոտի		2200,0	2200,0	X
11308	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում		0,00		X
11309	Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար		200,0	200,0	X
11310	Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար		430,0	430,0	X
11311	Քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ, սահմանված կարգին համապատասխան, տնային		0,00		X

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
11312	Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների (բացառությամբ Երևան քաղաքի)		77,00	77,00	X
11313	Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդանիշերը (գինանշան, անվանում և Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու		300,00	300,00	X
11314	(բացառությամբ երթուղային տաքսիների, միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար		0,00		X
11315	Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության		0,00		X
11316	Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման		0,00		X
11317	Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն		0,00	0,00	X
11318	Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար		20,00	20,00	X
11319	Այլ տեղական տուրքեր		0,00		X
1140	1.4 Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր	7146	0,00	0,00	X
1141	Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ,		0,00		X
1142	Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով		0,00		X
1150	1.5 Այլ հարկային եկամուտներ (տող 1151 + տող 1155),	7161	0,00	0,00	X
1151	Օրենքով պետ. բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների		0,00		X
1152	Եկամտային հարկ		0,00		X
1153	Շահութահարկ		0,00		X
1154	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ		0,00		X
1155	Հողի հարկի, գույքահարկի և անշարժ գույքի հարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում		0,00		X
1200	2. ՊԱՇՏՈՆԱԳԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + տող	7300	655663,20	599720,10	55943,10
1210	2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այլ	7311	0,00	0,00	X
1211	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ		0,00		X
1220	2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից	7312	0,00	X	0,00
1221	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ		0,00	X	
1230	2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային	7321	0,00	0,00	X

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1231	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0,00		X
1240	2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով	7322	0,00	X	0,00
1241	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0,00	X	
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1251)	7331	599720,1	599720,1	X
1251	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		599720,1	599720,1	X
1252	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ (տող 1253 + տող 1254) այդ թվում՝		0,000	0,000	X
1253	Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի		0,000		X
1254	Այլ դոտացիաներ		0,000	0,000	X
1255	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		0,00		X
1256	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող		0,00	0,00	X
1260	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ	7332	55943,100	X	55943,100
1261	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		55943,100	X	55943,100
1262	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող		0,00	X	
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1331)	7400	59230,72	59230,72	140825,57
1310	3.1 Տոկոսներ այդ թվում՝	7411	0,00	X	0,00
1311	Օրենքով նախատեսված դեպքերում բանկերում համայնքի բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների		0,00	X	
1320	3.2 Շահաբաժիններ	7412	0,00	0,00	X
1321	Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող		0,00		X
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331)	7415	10774,0	10774,0	X
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ		9964,0	9964,0	X
1332	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության		0,00		X
1333	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող		0,00		X
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		810,0	810,0	X
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	7421	0,00	0,00	X
1341	Համայնքի սեփականություն հանդիսացող, այդ թվում՝ տիրազուրկ, համայնքին որպես սեփականություն		0,00		X
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված յիսգորությունների		0,00		X

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1343	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի		0,00		X
1350	3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352+տող 1351)	7422	20500,0	20500,0	X
1351	Տեղական վճարներ		16500,0	16500,0	X
13501	Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ		100,0	100,0	X
13502	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության		0,0	0,0	X
13503	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար		1000,0	1000,0	X
13504	Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և		0,00	0,00	X
13505	Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար		600,00	600,00	X
13506	Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար		0,00	0,00	X
13507	Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար		7500,0	7500,0	X
13508	Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր		0,00	0,00	X
13509	Կենտրոնացված ջեռուցման համար		0,00		X
13510	Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ		700,00	700,00	X
13511	Ռոտզման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն		0,00		X
13512	Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության		0,00		X
13513	Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար		5000,00	5000,00	X
13514	Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար		1200,00	1200,00	X
13515	Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում բնակեցման		0,0	0,0	X
13516	Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակութային անշարժ հուշարձանների և		0,0		X
13517	Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և		0,0		X
13518	Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար		0,0		X
13519	Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց		400,0	400,0	X
13520	Այլ տեղական վճարներ		0,0		X
1352	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման		4000,0	4000,0	X

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1353	Համայնքի բյուջե մուտքագրվող այլ վարչական գանձումներ		0,00		X
1360	3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից (տող 1361 + տող 1362)	7431	0,00	0,00	X
1361	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից		0,00		X
1362	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից		0,00		X
1370	3.7 Համայնքի բյուջե մուտքագրվող այլ կատեգորիաներում չդասակարգված ընթացիկ	7441	9933,0	9933,0	X
1371	Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա		0,0		X
1372	Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին աղբյուրներից		9933,0	9933,0	X
1380	3.8 Համայնքի բյուջե մուտքագրվող այլ կատեգորիաներում չդասակարգված կապիտալ	7442	0,00	X	0,00
1381	Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ստացման		0,00	X	
1382	Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի իրականացման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին		0,00	X	
1390	3.9 Այլ եկամուտներ (տող 1391 + տող 1392 + տող 1393)	7452	18023,717	18023,717	140825,571
1391	այդ թվում՝ Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր		0,00	X	
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր		140825,571	X	140825,571
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ		18023,717	18023,717	

ՀԱՏՎԱԾ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ

(հազար դրամներով)

Տողի NN	Բա- ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (ս.7+ս.8)	այդ թվում՝	
						վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6	7	8
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	1047885,446	776631,617	412079,400
2100	01	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	414091,3000	340538,1000	73553,2000
2110	01	1	0	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	311114,8	304857,1	6257,7
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	311114,8	304857,1	6257,70
2112	01	1	2	Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ	0,0000		
2113	01	1	3	Արտաքին հարաբերություններ	0,0000		
2120	01	2	0	Արտաքին տնտեսական օգնություն	0,0000	0,0000	0,0000
2121	01	2	1	Արտաքին տնտեսական աջակցություն	0,0000		
2122	01	2	2	Միջազգային կազմակերպությունների միջոցով տրամադրվող տնտեսական օգնություն	0,0000		
2130	01	3	0	Ընդհանուր բնույթի ծառայություններ	1656,0000	1656,0000	0,0000
2131	01	3	1	Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ	0,0000		
2132	01	3	2	Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ	0,0000		
2133	01	3	3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	1656,0000	1656,0000	
2140	01	4	0	Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք	0,0000	0,0000	0,0000
2141	01	4	1	Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք	0,0000		
2150	01	5	0	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախաձեռնի աշխատանքներ	0,0000	0,0000	0,0000
2560	05	6	0	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		0,0000	0,0000	0,0000
2561	05	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		0,0000	0,0000	
2600	06	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ		88377,7000	2550,0000	85827,7000
2610	06	1	0	Բնակարանային շինարարություն		0,0000		0,0000
2611	06	1	1	Բնակարանային շինարարություն		0,0000		
2620	06	2	0	Համայնքային զարգացում		0,0000	0,0000	
2621	06	2	1	Համայնքային զարգացում		0,0000	0,0000	
				- Այլ ընթացիկ դրամաշնորհներ		0,0000	0,0000	
2630	06	3	0	Ջրամատակարարում		19280,4000	60,0000	19220,4000
2631	06	3	1	Ջրամատակարարում		19280,4000	60,0000	19220,4000
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային		0,0000		
				-Էներգետիկ ծառայություններ	4212000	0,0000	0,0000	
				-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423900	0,0000	0,0000	
				-Մասնագիտական ծառայություններ	424100	0,0000	0,0000	
				-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425100	0,0000	0,0000	
				-Պարտադիր վճարներ	482300	60,0000	60,0000	
				-Շենքերի և շինությունների կառուցում	511200	19220,4000		19220,4000
				-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	511300	0,0000		0,0000
				- Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր	513300	0,0000		0,0000
				- Նախագծահետազոտական ծախսեր	513400	0,0000		0,0000
				Համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր և Փողոցների լուսավորում	551100	0,0000		0,0000
2640	06	4	0	Փողոցների լուսավորում		28834,5000	1990,0000	26844,5000
2641	06	4	1	Փողոցների լուսավորում		28834,5000	1990,0000	26844,5000
				-Էներգետիկ ծառայություններ	421200	0,0000	0,0000	
				-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423900	1140,0000	1140,0000	
				-Մասնագիտական ծառայություններ	424100	0,0000	0,0000	
				-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և	425100	0,0000	0,0000	
				-Հատուկ նպատակային այլ նյութեր	426900	850,0000	850,0000	
				-Շենքերի և շինությունների կառուցում	511200	9339,5000		9339,5000
				-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	511300	17505,0000		17505,0000
				-Այլ մեքենաներ և սարքավորումներ	512900	0,0000		0,0000
				-Նախագծահետազոտական ծախսեր	513400	0,0000		0,0000
2650	06	5	0	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ		40262,8000	500,0000	39762,8000
2651	06	5	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ		40262,8000	500,0000	39762,8000
				-Մասնագիտական ծառայություններ	424100	0,0000	0,0000	
				-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425100	500,0000	500,0000	
				-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113000	28992,8000		28992,8000
				-Նախագծահետազոտական ծախսեր	5134000	770,0000		770,0000

Տողի NN	Քա- ժին	Խումբ	Պատ	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը (ս.7 +ս.8)	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5		6	7	8
				Համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր և (կամ)կապիտալ ակտիվի ձեռք բերում	551100	10000,0000		10000,0000
2660	06	6	0	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		0,0000	0,0000	0,0000
2661	06	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		0,0000		
2700	07	0	0	Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ		250,0000	250,0000	0,0000
2710	07	1	0	Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ		250,0000	250,0000	0,0000
2711	07	1	1	Դեղագործական ապրանքներ		250,0000	250,0000	
				- Առողջապահական և լաբորատոր նյութեր	426600	250,0000	250,0000	
2712	07	1	2	Այլ բժշկական ապրանքներ		0,0000		
2713	07	1	3	Բժշկական սարքեր և սարքավորումներ		0,0000		
2720	07	2	0	Արտահիվանդանոցային ծառայություններ		0,0000	0,0000	0,0000
2721	07	2	1	Ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ		0,0000		
2722	07	2	2	Մասնագիտացված բժշկական ծառայություններ		0,0000		
2723	07	2	3	Ստոմատոլոգիական ծառայություններ		0,0000		
2724	07	2	4	Պարաբժշկական ծառայություններ		0,0000		
2730	07	3	0	Հիվանդանոցային ծառայություններ		0,0000	0,0000	0,0000
2731	07	3	1	Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայություններ		0,0000		
2732	07	3	2	Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ		0,0000		
2733	07	3	3	Բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայություններ		0,0000		
2734	07	3	4	Հիվանդի խնամքի և առողջության վերականգնման տնային ծառայություններ		0,0000		
2740	07	4	0	Հանրային առողջապահական ծառայություններ		0,0000	0,0000	0,0000
2741	07	4	1	Հանրային առողջապահական ծառայություններ		0,0000	0,0000	
				- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ	463700	0,0000	0,0000	
2750	07	5	0	Առողջապահության գծով հետազոտական և մախագծային աշխատանքներ		0,0000	0,0000	0,0000
2751	07	5	1	Առողջապահության գծով հետազոտական և մախագծային աշխատանքներ		0,0000		
2760	07	6	0	Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)		0,0000	0,0000	0,0000
2761	07	6	1	Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր		0,0000		
2762	07	6	2	Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)		0,0000		
2800	08	0	0	ՀԱՆՔԻՍ, ՄՇԱԿՈՒՅՑ ԵՎ ԿՐՈՆ		72993,3000	72993,3000	0,0000
2810	08	1	0	Հանգստի և սպորտի ծառայություններ		8040,0000	8040,0000	0,0000
2811	08	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ		8040,0000	8040,0000	0,0000
				-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423900	6540,0000	6540,0000	
				-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425100	0,0000	0,0000	
				-Գրասենյակային նյութեր և հագուստ	426100	0,0000	0,0000	
				-Հատուկ նպատակային այլ նյութեր	426900	1000,0000	1000,0000	
				-Կրթական, մշակութային և սպորտային նպատակներ բուժելից	472700	500,0000	500,0000	
				-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող	481900	0,0000	0,0000	
2820	08	2	0	Մշակութային ծառայություններ		64613,3000	64613,3000	0,0000
2821	08	2	1	Գրադարաններ		0,0000	0,0000	
2822	08	2	2	Թանգարաններ և ցուցասրահներ		0,0000		
2823	08	2	3	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ		56613,3000	56613,3000	0,0000
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ուստ բյուջետային		0,0000		
				-Կապիտալ դրամաշնորհներ միջազգային	462200	0,0000	0,0000	
				- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ	463700	56613,3000	56613,3000	
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	511300	0,0000		0,0000
				-Վարչական սարքավորումներ	512200	0,0000		0,0000
				-Այլ մեքենաներ և սարքավորումներ	512900	0,0000		0,0000
				- Նախագծահետազոտական ծախսեր	513400	0,0000		0,0000
2824	08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ		8000,0000	8000,0000	
				- Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	423600	0,0000	0,0000	
				-Ներկայացուցչական ծախսեր	423700	1000,0000	1000,0000	
				-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423900	2880,0000	2880,0000	
				-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	426700	1000,0000	1000,0000	
				-Հատուկ նպատակային այլ նյութեր	426900	3120,0000	3120,0000	
				- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	463900	0,0000	0,0000	
				-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող	481900	0,0000	0,0000	
2825	08	2	5	Արվեստ		0,0000		

Տողի NN	Քա- ժին	Խումբ	Պատ	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը (ս.7 +ս.8)	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5		6	7	8
2826	08	2	6	Կինեմատոգրաֆիա		0,0000		
2827	08	2	7	Ֆուլարծանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում		0,0000	0,0000	0,0000
				-Շենքերի և շինությունների շինարարություն	511200	0,0000		0,0000
2830	08	3	0	Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայություններ		200,0000	200,0000	0,0000
2831	08	3	1	Հեռուստառադիոհաղորդումներ		0,0000	0,0000	
				-Տեղակատվական ծառայություններ	423400	0,0000	0,0000	
2832	08	3	2	Հրատարակչություններ, խմբագրություններ		200,0000	200,0000	
				-Տեղեկատվական ծառայություններ	423400	0,0000	0,0000	
				- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	463900	200,0000	200,0000	
2833	08	3	3	Տեղեկատվության ձեռքբերում		0,0000		
2840	08	4	0	Կրոնական և հասարակական այլ ծառայություններ		140,0000	140,0000	0,0000
2841	08	4	1	Երիտասարդական ծրագրեր		0,0000	0,0000	
2842	08	4	2	Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ		0,0000	0,0000	
				-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող	481900	0,0000	0,0000	
2843	08	4	3	Կրոնական և հասարակական այլ ծառայություններ		140,0000	140,0000	
				-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ		140,0000	140,0000	
				- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	463900	0,0000	0,0000	
				-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող	481900	0,0000	0,0000	
2850	08	5	0	Հանգստի, մշակույթի և կրոնի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ		0,0000	0,0000	0,0000
2851	08	5	1	Հանգստի, մշակույթի և կրոնի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ		0,0000		
2860	08	6	0	Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)		0,0000	0,0000	0,0000
2861	08	6	1	Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)		0,0000		0,0000
				-Շենքերի և շինությունների շինարարություն	511200	0,0000		0,0000
				-Ոչ-նյութական հիմնական միջոցներ	513200	0,0000		0,0000
2900	09	0	0	Կրթություն		146823,0170	92160,7170	54662,3000
2910	09	1	0	Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն		144523,0170	89860,7170	54662,3000
2911	09	1	1	Նախադպրոցական կրթություն		144523,0170	89860,7170	54662,3000
				Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	463700	89860,7170	89860,7170	
				-Պարտադիր վճարներ	482300	0,0000	0,0000	
				Բ, ՈՉ-ՖԻՆԱՆՍԱՎԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	x	50600,3000		50600,3000
				Այլ կապիտալ դրամաշնորհներ	465700	0,0000	0,0000	
				-Շենքերի և շինությունների կառուցում	511200	38739,7000		38739,7000
				-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	511300	12909,0000		12909,0000
				-Նախագծահետազոտական ծախսեր	513400	425,0000		425,0000
				Համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր և (կամ)կապիտալ ակտիվի ձեռք բերում	551100	2488,6000		2488,6000
2912	09	1	2	Տարրական ընդհանուր կրթություն		0,0000		
2920	09	2	0	Միջնակարգ ընդհանուր կրթություն		2000,0000	2000,0000	0,0000
				Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ	465500	0,0000	0,0000	
2921	09	2	1	Հիմնական ընդհանուր կրթություն		0,0000		
2922	09	2	2	Միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթություն		2000,0000	2000,0000	
				-Հատուկ նպատակային այլ նյութեր		1500,0000	1500,0000	
				Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	463700	500,0000	500,0000	
2930	09	3	0	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն		0,0000	0,0000	0,0000
2931	09	3	1	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն		0,0000		
2932	09	3	2	Միջին մասնագիտական կրթություն		0,0000	0,0000	
2940	09	4	0	Բարձրագույն կրթություն		300,0000	300,0000	0,0000
2942	09	4	2	Հետբուհական մասնագիտական կրթություն		0,0000		
2950	09	5	0	Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն		0,0000	0,0000	0,0000
2951	09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն		0,0000	0,0000	0,0000
				Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	463700	0,0000	0,0000	
				-Մասնագիտական ծառայություններ29	424100	0,0000		

Տողի NN	Բա- ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը (ս.7 +ս.8)	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5		6	7	8
				-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	511300	0,0000		0,0000
				-Նախագծահետազոտական ծախսեր	513400	0,0000		0,0000
2952	09	5	2	Լրացուցիչ կրթություն		0,0000		
2960	09	6	0	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ		0,0000	0,0000	0,0000
2961	09	6	1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ		0,0000	0,0000	
2970	09	7	0	Կրթության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներ		0,0000	0,0000	0,0000
2971	09	7	1	Կրթության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներ		0,0000		
2980	09	8	0	Կրթություն (այլ դասերին չպատկանող)		0,0000	0,0000	0,0000
2981	09	8	1	Կրթություն (այլ դասերին չպատկանող)		0,0000		
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ		3200,0000	3200,0000	0,0000
3010	10	1	0	Վատառողջություն և անաշխատունակություն		0,0000	0,0000	0,0000
3011	10	1	1	Վատառողջություն		0,0000		
3012	10	1	2	Անաշխատունակություն		0,0000		
3020	10	2	0	Ծերություն		0,0000	0,0000	0,0000
3021	10	2	1	Ծերություն		0,0000		
3030	10	3	0	Հարազատին կորցրած անձինք		300,0000	300,0000	0,0000
3031	10	3	1	Հարազատին կորցրած անձինք		300,0000	300,0000	
				-Այլ նպաստներ բյուջեից	472900	300,0000	300,0000	
3040	10	4	0	Ընտանիքի անդամներ և զավակներ		0,0000	0,0000	0,0000
3041	10	4	1	Ընտանիքի անդամներ և զավակներ		0,0000	0,0000	
				-Այլ նպաստներ բյուջեից	472900	0,0000	0,0000	
3050	10	5	0	Գործազրկություն		0,0000	0,0000	0,0000
3051	10	5	1	Գործազրկություն		0,0000	0,0000	
3060	10	6	0	Բնակարանային ապահովում		0,0000	0,0000	0,0000
3061	10	6	1	Բնակարանային ապահովում		0,0000		
3070	10	7	0	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)		2900,0000	2900,0000	0,0000
3071	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)		2900,0000	2900,0000	
				-Այլ նպաստներ բյուջեից	472900	0,0000	0,0000	
3080	10	8	0	Սոցիալական պաշտպանության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներ		0,0000	0,0000	0,0000
3081	10	8	1	Սոցիալական պաշտպանության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներ		0,0000		
3090	10	9	0	Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		0,0000	0,0000	0,0000
3091	10	9	1	Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		0,0000		
3092	10	9	2	Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժադակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		0,0000		
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍՎՈՂ ՊԱՅՈՒՄՍԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող3110)		445,9290	141271,5000	0,0000
3110	11	1	0	ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ		445,9290	141271,5000	0,0000
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		445,9290	141271,5000	0,0000
				-Պահուստային միջոցներ	489100	445,9290	141271,5000	



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 082-Ա

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ԴՊՐՈՑ» ՍՊԸ-Ի ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգի 2-րդ կետի 15-րդ ենթակետով, 3-րդ կետի 15-րդ ենթակետով, հիմք ընդունելով «Սոցիալական Ձեռներեցների դպրոց» ՍՊԸ-ի տնօրեն Գոհար Մկոյանի 15.08.2025թ-ի թիվ SSE-201025-123 դիմումը՝ Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքում «Դարձի՛ր Սոցիալական Ձեռներեց, շենագրո՛ւ Քո Փամբակ համայնքը» կրթական ծրագրի մեկնարկին, որին մասնակցելու է Փամբակ համայնքի 15 բնակավայրի ընտրված 174 բնակիչներից առավել բարձր միավորներ հավաքած 18 ունկնդիր/մասնակից/:
2. Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ կրթական ծրագիրն իրականացնելու համար համայնքի բյուջեից 7 000 000 /յոթ միլիոն/ ՀՀ դրամի չափով համաֆինանսավորում կատարելուն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:


Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒԾԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՒ.



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 083-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24.06.2025թ-ի թիվ 065-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով AH381491, AH381450 և AH356431 տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերը, «Մար-Մոս» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Մակարյանի գրությամբ՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Փամբակ համայնքի ավագանու 24.06.2025թ-ի «Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցներն օտարելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները և աճուրդի պայմանները հաստատելու մասին» թիվ 065-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1) Որոշման 1-ին մասի 1) կետում «160 LL 70» պետհամարանիշը փոխել «645 DA 61» պետհամարանիշով:

3) Որոշման 1-ին մասի 3) կետում «999 RR 98» պետհամարանիշը փոխել «941 CS 61» պետհամարանիշով:

3) Որոշման 1-ին մասի 6) կետում Jeep Cherokee մակնիշի բառից հետո ավելացնել «942 CS 61» պետհամարանիշի» բառակապակցությունը, իսկ «N 07 AA005104 սեփականության վկայական» բառակապակցությունը փոխարինել «AH381491 տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր» բառակապակցությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ



ՀԱՄԱՅՆՔԻ Ղ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 084-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ, ԱՃՈՒՐԴԻ ՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001 թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելուն:

2. Վարձակալության իրավունքով, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, 25 տարի ժամկետներով տրամադրվում են հողամասեր.

- 1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0397-0001 ծածկագրով 0.4409 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 2-րդ կարգի խոտհարք: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ:
- 2) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0238-0020 ծածկագրով 0,82283 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 2-րդ կարգի արոտավայր: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ:
- 3) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0250-0024 ծածկագրով 0,153782 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:
- 4) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Ձորագյուղ բնակավայրի 06-066-0103-0053 ծածկագրով 3,66565 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 1 կարգի արոտավայր: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ:
- 5) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0212-0578 ծածկագրով 0,09850 հա գյուղատնտեսական նպատակային

նշանակության 4-րդ կարգի արոտավայր: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

6) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0212-0577 ծածկագրով 0,14340 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի արոտավայր: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

7) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0228-0014 ծածկագրով 0,03992 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի վարելահող: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ:

8) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0919-0002 ծածկագրով 0,06699 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ:

9) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Արջուտ բնակավայրի 06-019-0102-0103 ծածկագրով 3,806161 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 2-րդ կարգի արոտավայր: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ:

10) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Լեռնաջուր բնակավայրի 06-059-0124-0007 ծածկագրով 0.32628 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

Վարձակալության լուրի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

3. Կառուցապատման իրավունքով, 50 տարի ժամկետով տրամադրվում է ընդհանուր օգտագործման հողամաս.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0600-0002 ծածկագրով 0,03349 հա բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամաս: Հողամասի տարեկան կառուցապատման վճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

Կառուցապատման մրցույթի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Կողմ -9

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

Դեմ -0


Ձեռնպահ -3

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 085-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂԱԿԻ
ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱԹԵՎՈՍ ՌՌԲԵՐՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով, ՀՀ կառավարություն 26.05.2016 N 550-Ն որոշմամբ, հաշվի առնելով Մաթևոս Ռոբերտի Բարսեղյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տալ համաձայնություն Մաթևոս Ռոբերտի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող 06-034-0120-0031 կադաստրային ծածկագրով 1,021743 հա հողամասին կից գտնվող 06-034-0120-0028 կադաստրային ծածկագրով 0,493938 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով Մաթևոս Ռոբերտի Բարսեղյանին օտարելուն:

2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 700 900 (յոթ հարյուր հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -12
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒԾԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԼ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 086-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ
ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԼԱԴԻԿ ՀԱՅԿԻ ՔՈԶԻՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի
48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով, ՀՀ կառավարություն 26.05.2016 N 550-Ն
որոշմամբ, հաշվի առնելով Վլադիկ Հայկի Քոչինյանի դիմումը, համայնքի ղեկավարի
կողմից ներկայացված առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. Տալ համաձայնություն Վլադիկ Հայկի Քոչինյանին սեփականության իրավունքով
պատկանող 06-070-0336-0055 կադաստրային ծածկագրով 0,723057 հա հողամասին կից
գտնվող 06-070-0336-0057 կադաստրային ծածկագրով 0,32557 հա մակերեսով
համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային
նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասը ընդլայնման
նպատակով, ուղղակի վաճառքով Վլադիկ Հայկի Քոչինյանին օտարելուն:

2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 56 161
(հիսունվեց հազար հարյուր վաթսուներեկ) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -12
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

Դեմ -0

Ձեռնպահ -0



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 087-Ա

ԱՆԱՄՆԱՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ԱՐՄԵՆ ԿԱՌԼԵՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, «Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, հաշվի առնելով Արմեն Կառլենի Մկրտչյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու մասին, ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արմեն Կառլենի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող 06-023-0250-0028 ծածկագրով 0,1499 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամասը՝ անասնաշենք կառուցելու նպատակով, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակության իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ



ՀԱՄԱՅՆՔԻ Ղ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 088-Ա

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, հաշվի առնելով Արտյոմ Ռուդիկի Սաքանյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին, ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտյոմ Ռուդիկի Սաքանյանին սեփականության իրավունքով պատկանող 06-010-6001-0007 կադաստրային ծածկագրով 0.09004 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության հողամասը, խեցգետնաբուժարան հիմնելու նպատակով, փոխադրել ջրային օբյեկտների հողերի նպատակային նշանակության, ջրային օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2. Արտյոմ Ռուդիկի Սաքանյանին սեփականության իրավունքով պատկանող 06-010-6001-0006 կադաստրային ծածկագրով 0.06387 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության հողամասը, խեցգետնաբուժարան հիմնելու նպատակով, փոխադրել ջրային օբյեկտների հողերի նպատակային նշանակության, ջրային օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

3. Արտյոմ Ռուդիկի Սաքանյանին սեփականության իրավունքով պատկանող 06-010-0001-0017 կադաստրային ծածկագրով 0,1074 հա բնակավայրերի հողերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ջերմոց, ծածկարան և պարիսպ կառուցելու նպատակով, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

4. Սույն հողամասերի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Կողմ -12
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՀԱՄԱՅՆՔԻ Ղ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 089-Ա

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, հաշվի առնելով Արսեն Թեմուրբեկի Մկրտչյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու մասին, ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Արսեն Թեմուրբեկի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող 06-010-0001-0018 կադաստրային ծածկագրով 0,1096 հա բնակավայրերի հողերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ջերմոց և պարիսպ կառուցելու նպատակով, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:


2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Կողմ -12
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒԺԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ԽԱԶՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 090-Ա

«110/35/10ԿՎ «ՍՏԵՓԱՆԱՎԱՆ» ԵՎ «ՏԱՇԻՐ» ԵՆԹԱԿԱՅԱՆՆԵՐԻ 2-ՐԴ ՍՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ 110ԿՎ «ՍՏԵՓԱՆԱՎԱՆ-2» ՕԴԱՅԻՆ ԳԾՈՎ» ՆԱԽԱԳԻԾԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով «Վոլիոս նախագծային ինստիտուտի» ՓԲԸ-ի 29.05.2025թ-ի ՎՆ-090 գրությունը, ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 11.07.2025թ-ին անցկացված հանրային լսումների արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը և տեսաձայնագրությունը՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տալ նախնական համաձայնություն /կամ անհամաձայնություն/ «ՀԷՑ» ՓԲԸ Ներդրումային ծրագրի շրջանակներում «110/35/10ԿՎ «Ստեփանավան» և «Տաշիր» ենթակայանների 2-րդ սնուցումների ապահովումը նոր կառուցվող 110ԿՎ «Ստեփանավան-2» օդային գծով» նախագիծը շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման աշխատանքներին: Փամբակ համայնքի տարածքով վերոգրյալ օդային գիծը անցնում է 11 կմ (որից 4,7կմ անցնում է գոյություն ունեցող հենարաններով, իսկ 6,3կմ-ն անցնում է նոր տեղադրվող հենարաններով):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրը:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 091-L

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ
(ԱՄԵՆԱՄՅԱ) ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2025 թվականի (ամենամյա) ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՀԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐՆ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ (ԱՄԵՆԱՄՅԱ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Փամբակ համայնքի (այսուհետ՝ համայնք) սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2025 թվականի (ամենամյա) ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) նպատակաուղղված է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի (այսուհետ՝ Հողեր) օգտագործման արդյունավետության բարձրացման և համայնքի հողային պաշարների կառավարման՝ տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում համայնքային միասնական քաղաքականության սահմանման, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և համայնքի 2022-2026թթ. հնգամյա զարգացման ծրագրով (այսուհետ՝ ՀՀԶԾ) սահմանված խնդիրների լուծմանը և հանդիսանում է ՀՀԶԾ-ի բաղկացուցիչ մասը:
2. Ծրագրի իրականացման հիմքում դրվել են 2025 թվականի ընթացքում Հողերի նպատակային և ծրագրային կառավարման հետ կապված հարաբերությունները, ներառյալ՝ գույքագրման, հաշվառման, գնահատման, համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքների կազմակերպման, Հողերի պահպանվածության ապահովման ու կառավարման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և բյուջետային քաղաքականության ուղղություններով սահմանված խնդիրները:
3. Ծրագրի իրականացման իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության հողային, քաղաքացիական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերը, «Տեղական ինքնակառավարման մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին», «Հրապարակային սակարկությունների մասին», «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքները, հողային հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները, ինչպես նաև համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից ընդունված Հողերի կառավարման ոլորտի վերաբերյալ իրավական ակտերը:
4. Հողերը տնօրինում է համայնքի ավագանին՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետության հողային, քաղաքացիական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերով, այլ օրենքներով ու նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:
5. Հողերի կառավարման հարաբերությունների կարգավորումը ներառում է՝
 - 1) Հողերի կառավարման հիմնախնդիրների լուծումը.
 - 2) Հողերի հաշվառման բնագավառում միասնական սկզբունքների սահմանումը և համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի հաշվառման բազայում Հողերի ամբողջական ընդգրկումը, ինչպես նաև հաշվառման տվյալների ճշգրտության բարձր մակարդակ ապահովելու նպատակով ընտրանքային և համալիր ուսումնասիրությունների անցկացումը.
 - 3) Հողերի մշտադիտարկումը (մոնիթորինգ), օգտագործումը և պահպանումը, Հողերի շրջանառության նպատակային իրականացումը.
 - 4) Հողերի կառավարման բնագավառում համայնքային քաղաքականության մշակումն ու իրականացումը, ուղղությունների սահմանումը.
 - 5) Հողերի օտարման և օգտագործման ոլորտում համայնքային քաղաքականության մշակումը և իրականացումը.
 - 6) Հողերի նկատմամբ գույքային իրավունքների կառավարման ոլորտում միասնական քաղաքականության մշակումը և իրականացումը:
6. Ծրագրի նպատակներն են՝
 - 1) Հողերի կառավարման արդյունավետության շարունակական բարձրացումը.

2) Հողերի կառավարման միասնական համակարգի ձևավորումը, հանրային օգտակարության բարձրացումը.

3) Հողերի օտարումից, ինչպես նաև վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով տրամադրելուց ստացված միջոցների հաշվին համայնքի բյուջեում եկամուտների ապահովումն ու ավելացումը.

4) համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի, ինչպես նաև համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կառավարմանը հանձնված պետական սեփականություն հանդիսացող հողերի շրջանառության բնագավառում միասնական քաղաքականության իրականացումը.

5) Հողերի ամբողջական հաշվառումը, հաշվառման տվյալների թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

6) համայնքային հողային հարաբերությունների կարգավորումը և շարունակական բարեփոխումը.

7) Համայնքի բնակչությանը Հողերի կառավարման գործընթացին մասնակից դարձնելը.

8) Հողերի արդյունավետ կառավարման ճանապարհով համայնքում ներդրումային գրավչության բարձրացման և ներդրումների ներգրավման բարենպաստ պայմանների ստեղծումը և ապահովումը:

7. Սույն Ծրագրի իրականացման հիմքում դրված են Հողերի կառավարման հետևյալ սկզբունքները՝

1) Հողերի կառավարման յուրաքանչյուր հողակտորի ծրագրային կառավարման նպատակի սահմանում և ամրագրում.

2) Հողերի կառավարման արդյունավետության շարունակական ապահովում.

3) Հողերի կառավարման ոլորտում մասնակիցների շահերի ներդաշնակության ապահովում.

4) համայնք-մասնավոր համագործակցության պարզեցված պայմանների ներդրում.

5) Հողերի կառավարման թափանցիկության և հրապարակայնության ապահովում:

8. Հողերի կառավարման ընդհանուր գերակայություններն են՝

1) Հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման ապահովումը.

2) Հողերի բերրիության, ֆիզիկական, որակական և նորմատիվային այլ հատկանիշների պահպանումը.

3) համայնքի կարիքների բավարարման համար անհրաժեշտ Հողերի գերակայությունը, ընդ որում, եթե միևնույն հողամասը կարող է ունենալ նաև շահույթ ստանալու հնարավորություն, այնուամենայնիվ, այն դասվում է համայնքի կարիքները բավարարող հողամասերի խմբին.

4) համայնքի կարիքները բավարարող հողամասերը հիմնականում ենթակա չեն օտարման.

5) շահույթ ստանալու նպատակ հետապնդող հողամասերի կառավարման համար օգտագործման այլընտրանքային տարբերակներից նախապատվությունը տրվում է այն տարբերակներին, որոնք առավել նպաստում են համայնքի տնտեսական աճի ապահովմանը, մասնավոր հատվածում օտարերկրյա և ներքին ներդրումների ներգրավմանը, շուկայական մրցակցության խթանմանը, արտահանման խթանմանը, աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության հաղթահարմանը, համայնքի բյուջեի եկամուտների ավելացմանը

6) գյուղատնտեսական Հողերի բերրիության բարձրացումը և էկոլոգիական վիճակի բարելավումը:

9. Հողերի օտարման (սեփականության իրավունքով անհատույց տրամադրումը, աճուրդով վաճառքը, ուղղակի վաճառքը և փոխանակությունը) և օգտագործման (վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքի, անհատույց (մշտական) օգտագործման իրավունքի) տրամադրումը կազմակերպվում և իրականացվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմանը և հողային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերին համապատասխան:

10. Ծրագրի ցանկերում ներառված Հողերի օտարումը, օգտագործման և կառուցապատման իրավունքի տրամադրումն իրականացվում է բացառապես հողերի օգտագործման սխեմաներով, անտառշինական նախագծերով, բնակավայրերի գլխավոր հատակագծերով, մանրամասն հատակագծման նախագծերով, գոտևորման նախագծերով, դրանց բացակայության դեպքում՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներով նախատեսված նպատակներով օգտագործելու համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 30-ի «Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» N 479 որոշմամբ սահմանված կարգով:

11. համայնքում հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով հողերի օգտագործման ժամանակավոր սխեման կազմվում է հողամասերի նկատմամբ՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան:

II. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ՝ ԸՍՏ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ,
ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՈՒ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ,

12. Ստորև Աղյուսակում ներկայացված է համայնքի հողային հաշվեկշիռը՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտների:

	Տարածքը (հա)
Համայնքի տարածքը	52567,32
Հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության	
Գյուղատնտեսական նշանակության հողեր	33057,95
Որից՝	
Վարելահողեր	2033,042
Բազմամյա տնկարկներ	76,09
խոտհարքներ	5037,42
Արոտավայրեր	19964,22
Այլ հողատեսքեր	5947,18
Բնակավայրերի հողեր	
Որից՝	
Տնամերձ և այգեգործական հողեր	1812,19
Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	347,63
Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	146,54
Հատուկ պահպանվող տարածքների հողեր	527,26
Անտառային հողեր	16273,94
Ջրային հողեր	279,35

IV. ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

13. Սույն ծրագրի գործողությունը տարածվում է՝

- 1) համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա.
- 2) համայնքային հիմնարկներին, համայնքի մասնակցությամբ առևտրային և համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին, պետական ոչ առևտրային կազմակերպություններին, հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով և վարձակալությամբ տրամադրված Հողերի վրա.
- 3) քաղաքացիներին, իրավաբանական անձանց, օտարերկրյա պետություններին օգտագործման, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով տրամադրված և հավատարմագրային կառավարման հանձնված Հողերի վրա.
- 4) համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կառավարմանը հանձնված պետական սեփականություն հանդիսացող հողերի վրա:

14. Սույն ծրագրի գործողությունը չի տարածվում՝ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կառավարմանը չհանձնված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վրա, այդ հողամասերի հողային հարաբերությունների կարգավորումները համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը իրականացնում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսդրությամբ և նորմատիվ իրավական ակտերով սահմանված իրավակարգավորումներին համապատասխան:

15. Ծրագրով սահմանված նպատակների իրագործման համար պետք է լուծվեն հետևյալ խնդիրները՝

- 1) Հողերի օտարման և օգտագործման տրամադրման յուրաքանչյուր հողամասի ծրագրային կառավարման իրականացումը.
- 2) Հողերի օտարման, երկարաժամկետ և կարճաժամկետ վարձակալության գործընթացում արդիական գործիքակազմի կիրառումը, անհատույց օգտագործման տրամադրման ընթացակարգերի պարզեցումը, հավասար պայմանների սահմանումը, վարչարարության կրճատումը, գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.
- 3) չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող Հողերը տնտեսական շրջանառության մեջ դնելու աշխատանքների իրականացումը.
- 4) Հողերի հաշվառման բնագավառում արդիական միջոցների ներդրումը և հանրությանը հաշվառման տվյալները հասանելի դարձնելը.
- 5) Հողերի օգտագործման վիճակի վերաբերյալ ֆինանսատնտեսական մոնիթորինգի իրականացումը և Հողերի օգտագործման նկատմամբ գործուն վերահսկողական համակարգի ներդրումը.
- 6) Հողերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով՝ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների գործունեության արդյունքներից ելնելով նրանց պատասխանատվության և կատարված աշխատանքի խրախուսման բնագավառում նոր գործիքակազմի ներդրումը.
- 7) ներդրումային ծրագրեր իրականացնող, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակ հետապնդող և նոր աշխատատեղեր ստեղծող ձեռնարկություններին և կազմակերպություններին Հողերի օտարման և օգտագործման տրամադրման նպաստավոր պայմանների ապահովումը:

V. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ

16. Հողերը օտարվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված դեպքերում ու կարգով՝

- ա) սեփականության իրավունքն անհատույց փոխանցելու միջոցով.
- բ) ուղղակի վաճառքի միջոցով.
- գ) աճուրդով.
- դ) փոխանակության միջոցով:

17. Հողամասերը (բացառությամբ՝ արոտավայրերի) կարող են օտարվել (այդ թվում՝ անհատույց) միայն համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ:

18. Համայնքի սեփականությունը հանդիսացող արոտավայրերը հանդիսանալով ընդհանուր օգտագործման արոտավայրեր և ներառված լինելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների մեջ, օտարման ենթակա չեն, դրանք միայն կարող են տրվել օգտագործման իրավունքով:

19. Հողամասի օտարման մասին որոշումը ներառում է տեղեկություններ՝

1) հողամասի գտնվելու վայրի, ծածկագրի, մակերեսի, նպատակային նշանակության, հողատեսքի, գործառնական նշանակության, օտարման եղանակի, ժամկետների, նպատակի, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գնի, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գնի մասին.

2) հողամասն ուղղակի վաճառքի ներկայացնելու ժամանակ՝ գնորդի անունը կամ անվանումը, օտարվող հողամասի վաճառքի գնի և վճարման ժամկետների մասին:

20. Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը սահմանելով ոչ պակաս, քան գնահատված շուկայական արժեքը՝ կադաստրային արժեքի փոխարեն:

21. Հողամասն աճուրդով (մրցույթով) վաճառքի ներկայացնելու ժամանակ՝ չվաճառվելու դեպքում ավագանու նոր որոշումը ներառում է տեղեկություններ՝ հաջորդ աճուրդի (աճուրդների) կամ մրցույթի (մրցույթների) կազմակերպման մասին:

22. Հողամասերը օտարվում են համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ու համայնքի հողերի օգտագործման սխեմայով սահմանված նպատակներին, հողերի կառավարման հնգամյա ծրագրին համապատասխան և համայնքի տարածքում տնտեսական գործունեության խթանման համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով նախատեսված դեպքերում: Հողերի օտարումը պետք է լինի հիմնավորված, ապահովի որոշակի խնդրի արդյունավետ լուծում:

23. Հողերի օտարման պայմանագրերում պետք է ամրագրվեն համայնքի կողմից հողի առաջնային հետգնման իրավունքը և տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող ծրագրերի ժամկետները:

VI. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

24. Հողամասերն օգտագործման են տրամադրվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված դեպքերում ու կարգով՝

ա) անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով.

բ) վարձակալության:

25. Հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերից:

26. Հողերը կարող են օգտագործվել՝ վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով (այդ թվում՝ անհատույց) հանձնվել միայն համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ:

27. Հողամասի օգտագործման (վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքը) տրամադրելու մասին ավագանու որոշումը ներառում է տեղեկություններ՝ հողամասի գտնվելու վայրի, ծածկագրի, մակերեսի, նպատակային նշանակության, հողատեսքի, գործառնական նշանակության, օգտագործման տրամադրման եղանակի, օգտագործման ժամկետի, նպատակի, վճարի չափի, հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գնի մասին:

28. Հողամասը մրցույթով վարձակալության տրամադրելու դեպքում՝ վարձավճարի մեկնարկային տարեկան չափը չի կարող պակաս լինել տվյալ հողամասի գծով առաջացած անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափից:

29. Հողամասի վարձակալության մրցույթը չկայանալու դեպքում կրկնամրցույթը կարող է հայտարարվել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 78-րդ հոդվածով սահմանված կարգով ու ժամկետներում, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության

հողամասերի, որոնց կրկնամրցույթն անց է կացվում 7 աշխատանքային օրվա ընթացքում: Կրկնակի մրցույթի չկայանալու դեպքում հողամասը կարող է տրամադրվել առանց մրցույթի: 30. Համայնքի սեփականությունը հանդիսացող արոտավայրերը և խոտհարքները համայնքի ղեկավարի կողմից կարող են պարզեցված կարգով վարձակալության հանձնվել և առանց նոտարական վավերացման համապատասխան պայմանագրերը կնքվել մինչև 3 տարի ժամկետով՝ ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N 1477-Ն որոշմամբ սահմանված կարգով:

VII. ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

31. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերը և խոտհարքները՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսդրության կարգավորումների շրջանակներում կառավարվում են համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

32. Համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող արոտավայրերը և խոտհարքները՝ սեփականության իրավունքի՝ օգտագործման, տիրապետման և տնօրինման հիմքերով կառավարվում են համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

33. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների պլանավորված կառավարման նպատակով՝ համայնքի ղեկավարի հանձնարարությամբ և համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան համայնքային պաշտոնատար անձի միջոցով իրականացվում են արոտավայրերի և խոտհարքների կառավարման և պլանավորմանը միտված գործողություններ, մասնավորապես՝ արոտավայրերի օգտագործման (կառավարման) պլանի մշակումը և հաստատումը, դրանից բխող գործողությունների իրականացումը, անասունների արածեցման կարգի մշակումը և հաստատումը և այլն:

34. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների պլանավորված կառավարման նպատակով, համայնքի ղեկավարի հանձնարարությամբ՝ համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան համայնքային պաշտոնատար անձը.

1) կազմում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մաս կազմող հողերի ամենամյա և հնգամյա ծրագրերի արոտավայրերի ծրագրային բաղադրիչը և ներկայացնում համայնքի ղեկավարի քննարկմանը.

2) կազմում է համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի պարտադիր գույքագրման փաստաթղթի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների, դրանց ենթակառուցվածքների գույքագրման փաստաթուղթը և ներկայացնում է համայնքի աշխատակազմի քարտուղարին.

3) մշակում է համայնքի վարչական սահմաններում գտնվող արոտավայրերի օգտագործման (կառավարման) պլանի նախագիծը և ներկայացնում է համայնքի ղեկավարի քննարկմանն ու հաստատմանը.

4) իրականացնում է այլ գործառույթներ:

36. Գյուղատնտեսական նշանակության հողեր են համարվում գյուղատնտեսական կարիքների համար առանձնացված և գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, խոտհունձի, անասունների արածեցման, ինչպես նաև գյուղատնտեսական այլ նպատակների համար նախատեսված հողատեսքերը:

36. Գյուղատնտեսական նշանակության հողերը՝ ըստ հողատեսքերի, բաժանվում են՝

1) վարելահողերի.

2) բազմամյա տնկարկների.

3) խոտհարքների.

4) արոտավայրերի.

5) այլ հողատեսքերի:

37. Գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրումը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի թույլատրվում է բացառիկ դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով սահմանված կարգով:

38. Գյուղատնտեսական նշանակության հողերի, այդ թվում՝ խոտհարքների և արոտավայրերի օգտագործման կարգը որոշում են հողամասերի սեփականատերերը և (կամ) օգտագործողները՝ հողերի բնական գյուղատնտեսական շրջանացման, հողերի օգտագործման սխեմաներին և հողաշինարարական այլ փաստաթղթերին ու նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

39. Համայնքի սեփականություն հանդիսացող կամ համայնքի կառավարմանը հանձնված արոտավայրերը և խոտհարքները վարձակալությամբ տրամադրվում են անասնապահությամբ զբաղվելու (արածեցման) և խոտհունձի պայմանով: Արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք՝ զբաղեցված են ընդհանուր օգտագործման արոտավայրերով, ճանապարհներով, բնական ջրհորներով, աղբյուրներով և տեղական ինքնակառավարման մարմինների որոշմամբ, այլ օբյեկտներով:

40. Արոտավայրերի և խոտհարքների վարձակալության պայմանագրերը կնքվում են ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N1477-Ն որոշման հիման վրա՝ պարզեցված կարգով:

41. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» N 389-Ն որոշման համաձայն, համայնքի ղեկավարը՝ պետք է մշակի համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման պլան:

42. «Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման (կառավարման) պլանը» ընդունվում է համայնքի ղեկավարի համապատասխան որոշմամբ:

43. Արոտավայրերի և խոտհարքների օգտագործման (կառավարման) պլանը ընդունվում է մինչև արոտավայրերի օգտագործման ժամանակաշրջանը, դրանում հաշվի են առնվում արածեցվող կենդանիների թվաքանակը և արոտավայրերի բերքատվությունը:

44. Արոտավայրերի և խոտհարքների օգտագործման (կառավարման) պլանում յուրաքանչյուր տարվա համար սահմանվում է արոտային շրջանի սկիզբը և ավարտը՝ ելնելով տվյալ տարվա կլիմայական պայմաններից:

45. Արոտային շրջանը սահմանվում է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» N 389-Ն որոշման 6-րդ կետի պահանջները, կիրառելով դրանք, տվյալ համայնքի՝ աշխարհագրական դիրքին և լանդշաֆտային գոտիավորումներին համապատասխան:

46. Արոտավայրերում կենդանիների մակատեղերի կառուցումը, արոտավայրից ջրելատեղերի հեռավորության սահմանումը, բնական խոտհարքներում խոտհունձի կատարումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» N 389-Ն որոշման 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ և 23-րդ կետերով սահմանված չափորոշիչների համաձայն:

47. Արոտավայրերի և խոտհարքների օգտագործման (կառավարման) պլանը ներառում է.

1) արոտավայրերի ընդհանուր մակերեսը և սեփականության ձևերը.

2) համայնքի (դրանում ընդգրկված բնակավայրերի) անասնազխաքանակն ըստ տնտեսությունների և անասնակերի պահանջը.

- 3) անասնակերի պահանջի հաշվարկը.
 - 4) համայնքի ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկությունները.
 - 5) ըստ գոտիների արոտատեղամասերի ընթացիկ կառավարումը.
 - 6) արոտատեղամասերի էկոլոգիական գնահատումը.
 - 7) համայնքի արոտների և խոտհարքների բուսածածկն ու բերքատվության ցուցանիշները.
 - 8) համայնքի կերահանդակներից և այլընտրանքային կերապահովման տարածքներից ստացվող չոր զանգվածի և արածեցման օրերի քանակը.
 - 9) արոտատեղամասերի բաշխվածության գոտիականության քարտեզը.
 - 10) արոտատեղամասերի բաշխվածության քարտեզը.
 - 11) արոտատեղամասերի արածեցման գրաֆիկը:
48. Համայնքի վարչական սահմաններում գտնվող արոտավայրի կամ խոտհարքի վարձակալության դեպքում, վարձակալության պայմանագիրը կնքելիս հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N 1477-Ն որոշմամբ վարձավճարի մասով սահմանված կարգավորումը, այն է՝ համապատասխան արոտավայրի կամ խոտհարքի վարձակալության պայմանագրի վարձավճարի չափը սահմանվում է տվյալ արոտավայրի կամ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:
49. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող արոտավայրերի կամ խոտհարքների վարձակալության տրամադրման նպատակով՝ համայնքի ավագանու կողմից ստեղծված մրցութային հանձնաժողովը առանձին փաստաթղթի տեսքով սահմանում է մրցութի պայմանները, որում ներառվում են՝
- 1) հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը.
 - 2) հողամասի չափը և վարձակալության և (կամ) կառուցապատման ժամկետները.
 - 3) արոտավայրի կամ խոտհարքի (հողամասի) գտնվելու վայրը, ծածկագիրը, վճարի մեկնարկային չափը.
 - 4) օգտագործման նպատակը (անասնապահությամբ զբաղվելու պարտադիր պայմանը).
 - 5) հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը.
 - 6) հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պահանջները.
 - 7) բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները:
50. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի կամ խոտհարքների վարձակալության տրամադրման մրցույթներն անցկացվում են բաց:
51. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի կամ խոտհարքների վարձակալության տրամադրման մրցույթին կարող է մասնակցել ցանկացած անձ:
52. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրի կամ խոտհարքի օգտագործման (վարձակալության) տրամադրելու վերաբերյալ մրցույթները կազմակերպում և անցկացնում է համայնքի ավագանու կողմից ստեղծված մրցութային հանձնաժողովը:
53. Մրցութային հանձնաժողովը, արոտավայրի կամ խոտհարքի օգտագործման (վարձակալության) տրամադրելու վերաբերյալ մրցույթն անցկացնելուց մեկ ամիս առաջ զանգվածային լրատվության միջոցներով և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների՝ <http://www.azdarar.am>, ինչպես նաև համապատասխան համայնքի պաշտոնական ինտերնետային կայքերում հրապարակում է վարձակալությամբ տրամադրվող արոտավայրի կամ խոտհարքի տեղեկատվությունը:
54. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրի կամ խոտհարքի օգտագործման (վարձակալության) տրամադրելու վերաբերյալ մրցութի մասին հրապարակվող տեղեկատվությունը ներառում է.
- 1) մրցույթի ձևը.

2) անցկացման տեղը.

3) մրցույթի անցկացման ամսաթիվը և ժամը.

4) հանձնաժողովի կողմից մշակված՝ մրցույթի պայմաններն ու պահանջները.

5) մրցույթի անցկացման կարգը, ներառյալ՝ մրցույթում մասնակցության ձևակերպման, մրցույթում հաղթած անձի որոշման, ինչպես նաև մրցույթի առարկայի նախնական գնի մասին:

55. Մրցույթին մասնակցելու հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ:

56. Արոտավայրի կամ խոտհարքի օգտագործման տրամադրելու վերաբերյալ հայտարարված մրցույթում հաղթած անձը և հանձնաժողովը՝ ի դեմս նախագահի (համայնքի ղեկավարի), մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը:

57. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրը կամ խոտհարքը կարող է օգտագործման (վարձակալության) տրամադրվել նաև արտամրցութային կարգով (առանց մրցույթի):

58. Առանց մրցույթ հայտարարելու, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրը կամ խոտհարքը վարձակալությամբ տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N 1477-Ն որոշման 1-ին կետի պահանջներին համապատասխան:

59. Առանց մրցույթ հայտարարելու, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրը կամ խոտհարքը վարձակալությամբ տրամադրվում է, վարձակալության պայմանագիրը մինչև 3 տարի ժամկետով կնքելու պայմանով:

60. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N 1477-Ն որոշման 1-ին կետի պահանջների հիման վրա՝ արտամրցութային կարգով կնքված վարձակալության պայմանագրից բխող օգտագործման իրավունքը ենթակա չէ պետական գրանցման:

61. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրի կամ խոտհարքի վարձակալության տրամադրման պայմանագիրը նոտարական վավերացում չի պահանջում, այն կնքվում է հասարակ գրավոր ձևով՝ պայմանագրի եզրափակիչ մասում դրվում է համայնքի ղեկավարի՝ որպես վարձատու կողմի ստորագրությունը և համայնքապետարանի աշխատակազմ կառավարչական հիմնարկի կնիքը:

62. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը և խոտհարքները օգտագործման կամ վարձակալության տրամադրելիս, վարձակալության պայմանագրում սահմանվում է պայմանագրի (պայմանագրի առարկայի օգտագործման) պայմանը:

63. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը վարձակալության տրամադրելիս, վարձակալության պայմանագրում որպես պայման սահմանվում է անասունների արածեցման նպատակը:

64. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող խոտհարքը վարձակալության տրամադրելիս, վարձակալության պայմանագրում որպես պայման սահմանվում է խոտհունձ կատարելու նպատակը:

65. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրը կամ խոտհարքը վարձակալության պայմանագրով օգտագործման տրամադրելիս, համայնքի ղեկավարի կամ վերջինիս կողմից լիազորված համայնքային պաշտոնատար անձի ի պաշտոնե իրավունքներն են.

1) վարձակալից պահանջել արոտավայրից կամ խոտհարքից օգտվել կնքված պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

2) վարձակալի կողմից օգտվելու վճարի վճարման ժամկետների խախտման դեպքում նրանից պահանջելու տուժանք՝ պայմանագրով սահմանված չափով.

3) պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով մուտք գործելու խոտհարքի կամ արածեցման համար տրամադրված արոտավայրի հողատարածք՝ չխոչընդոտելով օգտագործողի բնականոն գործունեությանը. 4) օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:

66. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրը կամ խոտհարքը վարձակալության պայմանագրով օգտագործման տրամադրելիս, համայնքի ղեկավարի կամ վերջինիս կողմից լիազորված համայնքային պաշտոնատար անձի ի պաշտոնե պարտականություններն են.

1) արոտավայրի կամ խոտհարքի վարձակալության պայմանագրի ստորագրումից հետո հնգօրյա ժամկետում օգտագործողին (վարձակալին) տրամադրել պայմանագրով որոշված համապատասխան արոտավայրի կամ խոտհարքի օգտագործման իրավունքը.

2) օգտագործողին (վարձակալին) նախագուշացնել պայմանագրի առարկա հանդիսացող՝ համապատասխան արոտավայրի կամ խոտհարքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (վարձակալություն, գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին.

3) չմիջամտել օգտագործողի (վարձակալի) գործունեությանը, եթե այդ գործունեությունը վնաս չի պատճառում արոտավայրին կամ խոտհարքին, շրջակա միջավայրին և չի խախտում այլ անձանց իրավունքները և օրինական շահերը:

67. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N 1477-Ն որոշման 1-ին կետի պահանջներին համապատասխան՝ առանց մրցույթ հայտարարելու, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրի կամ խոտհարքի վարձակալության պայմանագիրը կարող է երկարաձգվել.

1) վարձակալի նախաձեռնությամբ՝ համայնքի ղեկավարի համաձայնությամբ.

2) համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ՝ վարձակալի համաձայնությամբ:

68. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրի կամ խոտհարքի օգտագործման տրամադրման (վարձակալության) պայմանագիրը համայնքի ղեկավարի կամ վերջինիս կողմից լիազորված համապատասխան համայնքային պաշտոնատար անձի նախաձեռնությամբ կարող է վաղաժամկետ լուծվել հետևյալ դեպքերում.

1) օգտագործողը (վարձակալը) վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի վճարել վարձավճարը.

2) վարձակալության հանձնված խոտհարքը կամ արոտավայրը օգտագործվում է ոչ նպատակային՝ պայմանագրով սահմանված պայմանի խախտմամբ.

3) օգտագործողն (վարձակալը) էականորեն վատթարացրել է արոտավայրի կամ խոտհարքի վիճակը.

4) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից արոտավայրի կամ խոտհարքի գործառնական նշանակությունը փոփոխելու և այդ հիմքով օտարելու դեպքերում:

69. Համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց օգտագործման իրավունքով տրամադրված կամ վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող արոտավայրերի և խոտհարքների ըստ նպատակային նշանակության օգտագործման նկատմամբ իրականացվում է վերահսկողություն:

70. Համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց օգտագործման իրավունքով տրամադրված կամ վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող արոտավայրերի և խոտհարքների ըստ նպատակային նշանակության օգտագործման նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է ի պաշտոնե համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված համապատասխան համայնքային պաշտոնատար անձը:

71. Համայնքի ղեկավարը արոտավայրերի և խոտհարքների օգտագործման և տնօրինման բնագավառներում վերահսկողություն է իրականացնում՝

1) հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ.

2) արոտավայրերը և խոտհարքները ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու նկատմամբ.

- 3) արոտավայրերի և խոտհարքների սահմանների և սահմանանիշերի պահպանման նկատմամբ.
- 4) հողերի պահպանմանն ուղղված միջոցառումների նկատմամբ.
- 5) հողերի բերրի շերտի հանման, պահպանման և օգտագործման նկատմամբ:
72. Համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց օգտագործման իրավունքով տրամադրված կամ վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող արոտավայրերի և խոտհարքների ըստ նպատակային նշանակության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով՝ համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված համապատասխան համայնքային պաշտոնատար անձը իրավասու են կազմակերպել և իրականացնել տեղազնություններ, ուսումնասիրություններ և մշտադիտարկումներ:
73. Համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց օգտագործման իրավունքով տրամադրված կամ վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող արոտավայրերի և խոտհարքների ըստ նպատակային նշանակության օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունքներով պայմանավորված՝ համայնքի ղեկավարը իրավասու է վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով իրավախախտ սուբյեկտների նկատմամբ կիրառելու համապատասխան վարչական պատասխանատվության միջոցներ:
74. Համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց օգտագործման իրավունքով տրամադրված կամ վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող արոտավայրերի և խոտհարքների ըստ նպատակային նշանակության օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունքներով պայմանավորված՝ համայնքի ղեկավարը իրավասու է, հողային օրենսդրության պահանջների խախտումներ հայտնաբերելիս, համապատասխան դեպքերում կիրառել օրենքով սահմանված հետևյալ վարչական տույժերը.
- 1) քաղաքացիների կողմից արոտավայրը կամ խոտհարքը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու դեպքում՝ քաղաքացիների նկատմամբ նշանակել տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով.
- 2) արոտավայրի կամ խոտհարքի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնակամ փոփոխելու դեպքում՝ քաղաքացիների նկատմամբ նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով.
- 3) արոտավայրի կամ խոտհարքի բերրի շերտի օգտագործման կարգը խախտելու դեպքում՝ նշանակել տուգանք քաղաքացիների նկատմամբ, սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով.
- 4) արոտավայրի կամ խոտհարքի բերրիության և այլ օգտակար հատկությունների պահպանության և վերականգնման սահմանված կարգը խախտելու դեպքում՝ նշանակել տուգանք քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:
75. 2025 թվականի ընթացքում նախատեսվում է կնքել 20 հա վարելահողի, 30 հա խոտհարքի և 60 հա արոտավայրի վարձակալության պայմանագրեր:

VIII. ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՊԱՐՏԱԴԻՐ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄԸ

76. Փամբակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողերը ենթակա է ամենամյա պարտադիր գույքագրման:
77. Գույքագրումն իրականացվում է համայնքի ղեկավարի որոշման հիման վրա, որը պետք է պարունակի դրույթներ համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի գույքագրման հանձնաժողովի, գույքագրման մեկնարկի և ավարտի ժամկետների մասին՝ կախված համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ծավալից:
78. Գույքագրման և հաշվառման ենթակա են համայնքի սեփականություն հանդիսացող բոլոր հողերը, անկախ դրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական

գրանցման առկայության հանգամանքից: Մինչև փաստացի գույքագրում սկսելը, համայնքային սեփականություն հանդիսացող հողերի գույքագրման հանձնաժողովը պետք է ստանա գույքագրումը սկսելու պահի դրությամբ համայնքային հողերի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը: 79. Նյութական պատասխանատու անձինք տալիս են հայտարարություն այն մասին, որ մինչև հողերի գույքագրում սկսելը, համայնքի սեփականություն հանդիսացող հողերին վերաբերող բոլոր փաստաթղթերը հանձնված են հողօգտագործման բնագավառում համայնքապետարանի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանմանը կամ համապատասխան գործառույթներ իրականացնող համայնքային պաշտոնատար անձին:

80. Գույքագրման հանձնաժողովը ապահովում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի փաստացի հաշվեկշռի ամբողջական և ճշգրիտ գրանցումը գույքագրման ցուցակներում:

81. Գույքագրման աշխատանքներն իրականացնելիս, համայնքի ղեկավարը պարտավոր է ստեղծել բոլոր պայմանները՝ սահմանված ժամկետներում համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի նկատմամբ իրավունքների փաստացի առկայության լրիվ և ճիշտ ստուգումն ապահովելու համար:

82. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի փաստացի առկայության ստուգումը և հաշվառումը կատարվում է նյութական պատասխանատու անձի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նրա մասնակցության ապահովումն անհնարին է:

83. Գույքագրման ցուցակները կազմվում են տպագիր:

84. Գույքագրվող հողերի անվանումը և չափի միավորները, ծածկագրերը պետք է համապատասխանեն հաշվապահական հաշվառման մեջ ընդունված անվանացուցակին և չափի միավորներին:

85. Գույքագրման ցուցակները ստորագրում են գույքագրման հանձնաժողովի բոլոր անդամները և նյութական պատասխանատու անձինք: Գույքագրման յուրաքանչյուր ցուցակի վերջում նյութական պատասխանատու անձինք գրառում են կատարում՝ ակտիվների ստուգումը գույքագրման հանձնաժողովի կողմից իրենց ներկայությամբ իրականացնելու, գույքագրում իրականացնող աշխատակիցների նկատմամբ որևիցե բողոք չունենալու և ցուցակում նշված ակտիվները ի պահ ընդունելու վերաբերյալ:

86. Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի հաշվառում է համարվում համայնքային սեփականության հողերի վիճակի, չափերի, նպատակային նշանակության, ինչպես նաև օգտագործողների և օգտագործման ձևերի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը:

88. Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի գույքագրման փաստաթղթերը պետք է արտացոլվեն համայնքի հաշվեկշռում:

89. Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի հաշվառման ենթակա օբյեկտներ են համայնքի սեփականություն համարվող անշարժ գույքը՝ հողամասերը և տարածքները:

90. Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի հաշվառման տեղեկություններն օգտագործվում են անշարժ գույքի մշտադիտարկման համար, որի նպատակն է բարելավել համայնքային անշարժ գույքի օգտագործումը և պահպանումը, կանխատեսել համայնքային անշարժ գույքի նկատմամբ համայնքի հեռանկարային պահանջը:

91. Համայնքային անշարժ գույքի հաշվառման տվյալների հավաստիության բարձր մակարդակն ապահովելու նպատակով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանած կարգով և ժամկետներում իրականացվում է անշարժ գույքի գույքագրում, որը հաստատվում է համայնքի ավագանու կողմից:

92. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի 2025 թվականի ամենամյա գույքագրման հանձնաժողով ստեղծելու մասին համայնքի ղեկավարի կարգադրության նախագիծ:

93. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի հատակագծերը հաստատելու և հասցեներ տրամադրելու մասին համայնքի ղեկավարի որոշման նախագիծ:

94. Հողերի կառավարման համակարգի կատարելագործման և Հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) օտարել՝

ա. այն հողամասերը, որոնց աճուրդով և ուղղակի վաճառքի միջոցով օտարումը առավել կնպաստեն համայնքի տնտեսական աճի ապահովմանը, մասնավոր հատվածում օտարերկրյա և ներքին ներդրումների ներգրավմանը, շուկայական մրցակցության խթանմանը, արտահանման խթանմանը, աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության հաղթահարմանը, համայնքի բյուջեի եկամուտների ավելացմանը.

բ. այն հողամասերը, որոնց պահպանության, անապատացման, հողատարման, աղտոտման, ճահճացման, աղակալման և այլ երևույթների կանխարգելման միջոցառումների իրականացման համար զգալի ներդրումների կարիք ունեն և ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում ունեն զարգացման հեռանկարներ.

գ. այն հողամասերը, որոնք օրենքի ուժով և ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված կարգով սեփականության իրավունքով (անհատույց) ենթակա են փոխանցման իրավաբանական և ֆիզիկական անձանց:

դ. փոխանակելով քաղաքացիների կամ իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող հողամասերի հետ այն հողամասերը, որոնց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու, դրանց սեպաձևությունը, մասնատվածությունը, կտրտվածությունը վերացնելու և գյուղատնտեսական նշանակության հողամասերի միավորման (խոշորացման) նպատակային ծրագրերին աջակցելու նպատակով, ինչպես նաև, եթե քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց տրամադրված կամ նրանց սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական կամ բնակելի կառուցապատման հողամասերը դրանց սեփականատերերից անկախ պատճառներով չեն կարող օգտագործվել իրենց նպատակային նշանակությամբ, մասնավորապես, եթե հողամասերը գտնվում են պատերազմական գործողությունների պատճառով ականապատված տարածքներում, տեխնաձին վտանգներ պարունակող, այդ թվում՝ սողանքավտանգ գոտիներում, հատուկ պահպանվող և հատուկ նշանակության այնպիսի տարածքներում, որոնց համար՝ սահմանված իրավական ռեժիմով արգելված է տնտեսական գործունեության իրականացումը:

ե. հողամասերի արդյունավետ օգտագործման, անապատացման և այլ երևույթների կանխարգելման նպատակով կատարել ներդրումներ ոռոգման նախկին ցանցի բարելավման և նոր ոռոգման ցանցի կառուցման ուղղությամբ, որը կբարձրացնի գյուղատնտեսական նշանակության մշակաբույսերի բերքատվությունը: Ոռոգվող հողատարածքների ավելացման արդյունքում համայնքում հնարավոր կլինի մշակել ավելի բարցրարժեք մշակաբույսեր:

2) օգտագործման տրամադրել՝

ա. անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով և (կամ) սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով (այդ թվում՝ անհատույց)՝ իրենց գործառույթները և լիազորությունները լիարժեք, արդյունավետ գործունեություն իրականացնելու և համայնքի զարգացմանը նպաստելու նպատակներով՝ հողամասերը՝ պետական հիմնարկներին և կազմակերպություններին, համայնքային հիմնարկներին, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին, բարեգործական, հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին.

բ. հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով՝

գյուղատնտեսական մթերքների արտադրության աճի խթանման, համայնքում նոր ծառայությունների մատուցման, բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների, առանձին թաղամասերի և քաղաքաշինական համալիրների կառուցման, համայնքի բնակչության կարիքների առավել բավարարումն ապահովելու նպատակներով:

3) Հողերի յուրաքանչյուր հողամասի վերաբերյալ ամբողջական և լիարժեք տվյալներ ունենալու և անշարժ գույքի բազայում դրանք արտացոլելու և ըստ անհրաժեշտության օգտագործելու

նպատակներով՝ մինչև սույն Ծրագրի կազմումը, ինչպես նաև իրականացնել համայնքի գույքի գույքագրման ժամանակ հայտնաբերված չափագրման ենթակա հողամասերի չափագրումները և հասցեավորումները:

4) Համայնքի հողերի սեփականության իրավունքների, հողերի տնօրինման, տիրապետման և օգտագործման պաշտպանվածության ապահովման նպատակով՝ իրականացնել հողամասերի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցումները և ձեռքբերել սեփականության վկայականներ:

5) Համայնքում իրականացվելիք ներդրումային ծրագրերի իրականացմանը նպաստելու և ներդրումային բարենպաստ միջավայր ձևավորելու նպատակով հողամասերը տրամադրել որպես համայնքի կողմից ներդրում:

6) 2025 թվականի ընթացքում ապահովել ընդհանուր բնույթի հետևյալ միջոցառումների կատարումը՝

ա. վերանայել մինչև սույն Ծրագրի կազմումը նախկինում վարձակալության պայմանագրերով տրամադրված հողամասերի տրամադրման ժամկետները, վարձավճարների չափերը և դրանք համապատասխանեցնել գործող օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

բ. համապատասխան իրավական ակտերի միջոցով հողամասերի գործառնական և նպատակային նշանակությունները համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին:

գ. իրականացնել մինչև սույն Ծրագրի կազմումը նախկինում վարձակալության պայմանագրերով տրամադրված հողամասերի հողօգտագործողների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման մոնիթորինգ, հողօգտագործողների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարման պատճառների և գործոնների վերլուծություն:

դ. վերահսկողություն իրականացնել Հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ և վերահսկողության արդյունքում հայտնաբերված իրավախախտումների մասով կիրառել պատասխանատվության միջոցներ Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

ե. սահմանել Հողերի կառավարման գործընթացում ընդգրկված անձանց աշխատանքի պատասխանատվություն սահմանող և խրախուսման ենթարկող այնպիսի ձևեր ու մեխանիզմներ, որոնք կախված կլինեն նրանց գործունեության վերջնական արդյունքներից:

զ. Հողերի կառավարման գործընթացում ընդգրկված անձանց որակավորման բարձրացման նպատակով ապահովել նրանց մասնակցությունը մասնագիտական վերապատրաստումներին:

Ճ. ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

95. Ծրագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են առաջարկվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կամ ավագանու մշտական հանձնաժողովների կողմից: Համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների կամ անդամների կողմից առաջարկված այն փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ, որոնք ավելացնում են ծրագրի իրականացման ծախսերը, համայնքի ղեկավարը կազմում և ավագանուն է ներկայացնում իր եզրակացությունը:

96. Համայնքի ղեկավարը ծրագրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու վերաբերյալ ստացված բոլոր առաջարկությունները օրենքով սահմանված կարգով ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

ՃԻ. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

97. Ծրագրով նախատեսված միջոցառումների և համայնքային նշանակության հողաշինարարությունը (հողամասերի չափագրումը, համայնքի սեփականության իրավունքների պետական գրանցումը և վկայականների ձեռքբերումը, աճուրդների և մրցույթների

կազմակերպումը, գյուղատնտեսական հողերի պահպանման ծրագրերի մշակումը, հողամասերը տեղանքում ամրացնելը, հողամասերի հատակագծերի, հողամասի տրամադրման վերաբերյալ փաստաթղթերի նախապատրաստումը, համայնքային հողաշինարարական և հողի օգտագործման ու պահպանության այլ նախագծերի մշակումը, խախտված հողերի վերականգնումը, հողաշերտերը ջրային ու հողմային հողատարումից, անապատացումից, ցեխաջրերից, փլուզումներից, ջրածածկումից, ճահճացումից, չորացումից, պնդացումից, աղակալումից, արտադրական և կենցաղային թափոնների, ռադիոակտիվ և քիմիական նյութերի ախտահարումից պաշտպանելու, գյուղատնտեսական հողերը բարելավելու, նոր հողեր յուրացնելու, հողը պահպանելու և դրա բերրիությունը բարձրացնելու ծրագրերի, աշխատանքային նախագծերի մշակումը, հատուկ պահպանվող տարածքների տեղաբաշխման և դրանց սահմանագծման հիմնավորումը, համայնքում սեփականատերերի և հողօգտագործողների հողամասերի սահմանների նկարագրումը, ամրացումը և փոփոխությունը, հողաշինության գծով տեղագրական, գեոդեզիական, քարտեզագրական, հողային, ագրոքիմիական, երկրաբուսաբանական, պատմական և մշակութային ու այլ հետազոտական աշխատանքների իրականացումը, համայնքի հողային ֆոնդի հաշվառումը, գույքագրումը և չօգտագործվող, ինչպես նաև ոչ արդյունավետ օգտագործվող կամ իր նպատակային նշանակությանն անհամապատասխան օգտագործվող հողերի բացահայտումը, հողային պաշարների վիճակի և օգտագործման կադաստրային ու թեմատիկ քարտեզների և ատլասների կազմումը, հողերի մոնիթորինգը, նորհողամասերի կազմավորման, հողամասերի միավորման ու բաժանման, գոյություն ունեցող հողամասերի կարգավորման միջոցառումների իրականացումը) իրականացվում է համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

98. Ծրագրով նախատեսված Հողերի օտարումից, ինչպես նաև՝ վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով տրամադրումից, աճուրդների և մրցույթների կազմակերպումից ստացված միջոցները մուտքագրվում են համայնքի բյուջե:

XII. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ

99. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության բոլոր բնագավառներում կարևորագույն սկզբունքներից է թափանցիկությունը:

100. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ոլորտում համայնքապետարանի աշխատակազմը ապահովում է օրենսդրությամբ սահմանված՝ հրապարակման ենթակա գործողությունների, քայլերի, ընթացակարգերի, մշակված փաստաթղթերի նախագծերի թափանցիկությունը՝ դրա համար կիրառելով համայնքապետարանի աշխատակազմում, համայնքում, ինչպես նաև՝ այլ հարթակներում առկա և հասանելի միջոցները, հնարավորությունները և գործիքները:

101. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ոլորտում թափանցիկության և հրապարակայնության ապահովման իրավական հիմքեր են հանդիսանում «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը, 11-րդ հոդվածի 5-րդ մասի 18-րդ կետը, ինչպես նաև համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից ընդունված սույն ոլորտը կարգավորող իրավական ակտերը:

102. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը երաշխավորում են այդ գործունեության՝

- 1) օրինականությունը,
- 2) պատասխանատվությունն ու հաշվետվողականությունը,
- 3) մատչելիությունն ու վստահությունը,
- 4) օպերատիվությունն ու արագ արձագանքումը,
- 5) արդյունավետությունը:

103. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովման համար համայնքապետարանի աշխատակազմը կիրառում է հետևյալ գործիքները՝

- 1) համայնքի պաշտոնական համացանցային կայքը,
- 2) աշխատակազմի վարչական շենքի, ինչպես նաև միավորված բազմաբնակավայր համայնքների դեպքում՝ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի՝ բոլորի համար տեսանելի ու մատչելի տեղում փակցված ցուցատախտակները,
- 3) մարզպետարանի պաշտոնական համացանցային կայքը,
- 4) հրապարակային ծանուցումների www.azdarar.am կայքը,
- 5) մամուլը,
- 6) հեռուստատեսությունը,
- 7) զանգվածային լրատվության այլ միջոցները,
- 8) համայնքի վարչական տարածքում (բնակավայրերում)՝ բոլորի համար տեսանելի ու մատչելի վայրերում տեղադրված ցուցատախտակները:

104. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման գործընթացի թափանցիկությունն ու հրապարակայնությունը ապահովվում են հետևյալ մեթոդներով՝

- 1) համայնքի սեփականություն հանդիսացող հողերի գույքագրման անցկացումը գույքագրման կենտրոնական և աշխատանքային հանձնաժողովների կողմից, որոնցում ընդգրկվում են լայն շրջանակի աշխատակիցներ և մասնագետներ,
- 2) գույքագրման փաստաթղթերի հաստատումը համայնքի ավագանու որոշմամբ, որը հրապարակվում է համայնքապետարանի պաշտոնական կայքում և 7-օրյա ժամկետում ուղարկվում մարզպետարան, 3) գույքագրման արդյունքների հիման վրա կազմված համայնքի սեփականության հողերի ցանկի հրապարակումը համայնքապետարանի պաշտոնական կայքում,
- 4) համայնքապետարանի աշխատակազմի համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) «Համայնքային գույք» բաժնի վարումը գույքի կառավարման գործառույթներով օժտված աշխատակցի միջոցով,
- 5) համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերի կազմումը (որոնք հանդիսանում են համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը), դրանց հաստատումը համայնքի ավագանու որոշմամբ, որը հրապարակվում է համայնքի պաշտոնական համացանցային կայքում.
- 6) համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման հետ կապված ծախսերի և եկամուտների ընդգրկմամբ համայնքի բյուջեի, ինչպես նաև՝ բյուջեի եռամսյակային և տարեկան հաշվետվությունների կազմման, քննարկման և հաստատման գործընթացների իրականացումը հանրային մասնակցության ապահովմամբ,
- 7) համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման մասի ընդգրկմամբ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, ինչպես նաև՝ տարեկան աշխատանքային պլանի, կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվության հրապարակումը,
- 8) համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձակալության կամ օգտագործման տրամադրելու համար վարձավճարների և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծի հանրային լուծումները և քննարկումները,
- 9) համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը, ինչպես նաև՝ այլ անշարժ գույքը, օտարելու կամ վարձակալության տրամադրելու նպատակով հրապարակային սակարկությունների մասին հայտարարությունների հրապարակումը համայնքի պաշտոնական կայքում, մամուլում, զանգվածային լրատվության այլ միջոցներում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական կայքէջում, մարզպետարանի պաշտոնական կայքէջում,
- 10) հրապարակային սակարկությունների միջոցով համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օտարման և վարձակալության տրամադրման գործընթացի իրականացումը աճուրդային և մրցույթային հանձնաժողովների միջոցով, որոնց կազմում ընդգրկվում են նաև համայնքի գույքի կառավարման գործառույթներ իրականացնող աշխատակիցներ:

105. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման գործընթացի թափանցիկությունն ու հրապարակայնությունը ապահովում են բնակիչների մասնակցությունը համայնքի գույքի կառավարման գործընթացներին:

106. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման գործընթացին բնակիչների մասնակցության հիմնական գործիքակազմերն են՝

- 1) հանրային իրազեկում, տեղեկատվություն, զեկույցներ, հաշվետվություններ, ընդունելություններ,
- 2) հանրային լսումներ,
- 3) հարցումներ՝ հեռախոսազանգերով, բնակիչների բնակարաններ այցելություններով, փոստով (ներառյալ՝ էլեկտրոնային), բջջային հեռախոսների կարճ հաղորդագրություններով, համացանցային կայքում կամ սոցիալական հարթակներում՝ առցանց /online/ ռեժիմով,
- 4) հանդիպումներ համայնքապետարանում ֆոկլուս խմբերի հետ,
- 5) մասնակցություն համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների աշխատանքներին,
- 6) համայնքի ավագանու մշտական կամ ժամանակավոր, ֆորմալ կամ ոչ ֆորմալ հանձնաժողովներում բնակչության ներկայացուցիչների ընդունում,
- 7) համայնքի ավագանու նիստի օրակարգի բնակիչների նախաձեռնություն:

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵ



Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ